



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

08 հոկտեմբերի 2019 թվական

3-րդ ՆՏՏԱՇՐՋԱՆԻ 2-րդ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 14.00

Հայկ Մարության

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել են
ավագանու 11 անդամ՝

Հայկ Հովհաննիսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Դավիթ Խաժակյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Լևոն Զաքարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Թեհմինա Վարդանյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Իզաբելլա Աբգարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Անի Խաչատրյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Աննա Ջավախյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արման Անտոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արթուր Իսպիրյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Հայկ Միրզոյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Սաթենիկ Մկրտչյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Առաջին հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Հայկ Հովհաննիսյան, խնդրեմ:

Հայկ Հովհաննիսյան

-Շնորհակալություն: Պարոն քաղաքապետ, հոկտեմբերի 3-ի Ձեր տեսաուղերձում, որտեղ խոսում էիք «Սանիթեք» ընկերության հետ պայմանագրի լուծման վերաբերյալ, արտահայտեցիք միտք, որ գնումների գործընթացում բազմաթիվ խախտումներ են հայտնաբերվել: Կցանկանայի իմանալ ի՞նչ խախտումների մասին է խոսքը:

Երկրորդ հարցս հնչեցնեմ, քանի որ նույն ոլորտին է վերաբերում. «Սանիթեք» ընկերությունն այսքանից հետո իր ֆորմատի մեջ արբիտրաժով և մնացած հնարավոր դատարաններով, կարելի է ասել, սպառնում է մեզ: Ինչքանով ենք պաշտպանված և արդյոք Դուք այդտեղ խնդիր չե՞ք տեսնում: Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, պարոն Հովհաննիսյան, շատ ճիշտ հարցեր էին: Կարճ պատասխանեմ, նաև խոսքը կփոխանցեմ պարոն Համբարձումյանին, ով ավելի հանգամանորեն կպատասխանի: Բացի այն ինչ տեսել ենք մենք և մեր քաղաքացիները, այսինքն՝ աղբի հավաքագրման թերացումները, որոնք ամիսներ, եթե ոչ տարիներ շարունակ տեղի են ունեցել, եղել են տարօրինակ գործողություններ: Օրինակ՝ շատ մեծ կասկածներ է առաջացնում հենց պայմանագրի կնքման օրինականությունը, տեղերների անցկացման օրինականությունը: Այնուհետև՝ շատ հետաքրքիր փաստեր կան ընթացիկ փաստաթղթերի վարման հետ կապված, հարաբերություններ՝ «Սանիթեք»-պետություն, «Սանիթեք»-քաղաքապետարան և այլն: Այնպես որ այստեղ շատ հարցեր կան, որոնց պարոն Համբարձումյանը կանդրադառնա:

Արբիտրաժի հետ կապված, քիչ առաջ շփվելով լրագրողների հետ, ասացի, որ դա բավականին երկար գործընթաց է եղել, մեր կողմից մանրակրկիտ ուսումնասիրվել են բոլոր փաստաթղթերը: Եթե «Սանիթեք» ընկերությունը, այնուամենայնիվ, որոշում կայացնի դիմել արբիտրաժային դատարան, մենք լիովին պատրաստ ենք:

Հարցին կանդրադառնա քաղաքապետի խորհրդական Կարեն Համբարձումյանը, խնդրեմ:

Կարեն Համբարձումյան

-Պարոն քաղաքապետ, ավագանու հարգելի անդամներ, քաղաքապետարանի պաշտոնական կայքում հրապարակված են ծանուցումները: Այդ ծանուցումներում շատ հանգամանորեն և ժամանակագրական առումով նկարագրված է նաև, թե այդ գործարքն իր էությունից, բովանդակությամբ և փաստական հանգամանքներով որքանով է անհամատեղելի եղել գնման օրենսդրությանը գործարքի կնքման պահին: Այս առումով կառաջարկեմ, որ ծանոթանաք այդ ծանուցումներին:

Ընդհանուր առմամբ, կցանկանայի ասել, որ շատ ենք խոսում քաղաքամայր Երևանին և մեզ պատճառված անհարմարությունների և այս ծանր գործընթացի մասին, բայց ուզում եմ ասել, որ այս գործընթացն իրականում շատ բազմաշերտ է եղել և շոշափել է նաև պետության շահերը: Չեմ վարանի ասել, որ լրիվ հորինած թղթերով, ըստ էության, **2017** թվականից տրվել է փաստացի ավելացված արժեքի հարկի գծով արտոնություն, այսինքն, այսպես ասած, այն արտաքին միջամտությունը, որը մեր դիտարկմամբ եղել է գործարքի կնքման ժամանակ, շարունակվել է ընդհուպ մինչև թավշյա հեղափոխություն և ազդել է նաև պետական բյուջեի եկամուտների վրա: Այս առումով պետական եկամուտների կոմիտեում այս պահին քննվում է քրեական գործ և սա այս ամբողջ պատմության ընդամենը մի շատ հատկանշական դրվագ է:

Ինչ վերաբերում է արբիտրաժային գործընթացներին, ապա ևս մեկ անգամ ուզում եմ հավաստել, որ այս գործընթացի հետ կապված բոլոր իրավական ռիսկերը շատ մանրամասնորեն կշռվել են և կայացված որոշումը հաշվի է առնվել այդ ռիսկերի կշռման արդյունքում: Մենք վստահ ենք մեր գործողությունների ոչ միայն իրավաչափության, այլև՝ արդարացիության մեջ: Ասեմ նաև, որ այս գործընթացի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը փոխանցվել է վարչապետի աշխատակազմի համապատասխան պաշտոնատար անձին, ով պետության անունից համակարգում է նաև միջազգային արբիտրաժային գործընթացները: Եվ պետության դեմ արբիտրաժային գործընթաց սկսվելու պարագայում մեր բոլոր ռեսուրսներով կաջակցենք պետությանը, արդարադատության նախարարությանն այս գործընթացն իր տրամաբանական ավարտին հասցնելու համար նաև միջազգային արբիտրաժում:

Հայկ Մարության

-Շատ շնորհակալ եմ, պարոն Համբարձումյան:

Հայկ Հովհաննիսյան

-Շնորհակալ եմ, անկեղծ ասած, փաստացի ստացվում է այնպես, որ այն, ինչի մասին բարձրաձայնել ենք, և ոմանք մեզ ասում էին անհիմն են ձեր մտահոգությունները, մեղադրանքները, փաստացի ստացվում է, որ անհիմն չեն եղել: Հիմա ունենք մի փաստ, ես չեմ հավատացել, որ «Սանիթեք» ընկերությունը երբևէ կդիմի արբիտրաժային դատարան, բայց ամեն դեպքում ուրախ եմ, որ մեր հիմքերն ամուր են և կկարողանանք հավուր պատշաճի մեզ ներկայացնել:

Շնորհակալություն պատասխանի համար:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյան, խնդրեմ:

Դավիթ Խաժակյան

-Շնորհակալություն: Առաջին հարցս վերաբերում է թե՛ սպորտդպրոցներում, թե՛ ավելի շատ դպրոցների դահլիճների վարձակալություններին, որոնք սպորտխմբակների կողմից հաճախ վեճի առարկա են դառնում: Հաճախ հանդիպում են իրավիճակներ, երբ, որևէ խմբակ, հաճախ դա լինում է կարատեի պարագայում, դիմում է դպրոցին, որպեսզի կարողանա վարձակալել դահլիճը, սակայն, տեղեկացնում են, որ ամբողջն զբաղված է, հնարավորություն չկա: Սակայն պարզվում է, որ դա այդքան էլ այդպես չէ, կարծում եմ՝ պատկերացնում եք, որ մարզաձևի մասին է խոսքը, իրենց կողմից է այդ տարածքն զբաղեցված և մյուսները փաստացի խոչընդոտի են հանդիպում: Խնդիրն իսկապես բազմաշերտ է, բազմիցս քննարկել ենք քաղաքապետի տեղակալ պարոն Տիգրան Վիրաբյանի հետ և իրավիճակային կարգավորումներ տվել: Սակայն ընդհանուր խնդիր կա և՛ սպորտդպրոցների վարձակալությունների մասով, և՛ դպրոցների: Գուցե այս լիազորությունը պետական այլ մարմիններով է անցնում, բայց այս խնդրով, որպես ավագանու անդամ, անընդհատ մեզ են դիմում: Ուստի՝ կցանկանայի այս խնդիրն ուշադրություն դարձնել: Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը երկու բառով կանդրադառնա խնդրին, որպեսզի հանրությունն էլ տեղեկանա:

Տիգրան Վիրաբյան

-Շնորհակալ եմ հարցի համար: Այո, խնդրի մասին մի քանի անգամ զրուցել ենք, պարոն Խաժակյան և գաղտնիք բացած չեմ լինի, եթե ասեմ, որ երկար տարիներ և՛ հանրակրթական դպրոցները, և՛ մեր սպորտդպրոցներն օգտագործվել են, բառը ճիշտ եմ ընտրում, օգտագործվել են ի շահ մի մարզաձևի զարգացմանը, բարգավաճմանը և տարածմանը, մարզաձև, որն օլիմպիական չէ, բայց շատ եկամտաբեր է: Առաջնահերթությունը տրվել է այդ մարզաձևին, քանի որ ոլորտը համակարգող խորհրդականը նույնպես եղել է այդ մարզաձևի ներկայացուցիչ և այստեղ առավելություն է ունեցել այդ մարզաձևը:

Նաև դպրոցների դահլիճների վարձակալությունների դեպքում առաջնահերթությունը տրվել է այդ մարզաձևին: Մենք խնդիր ունենք դրված, քաղաքապետի կողմից ունենք հստակ հանձնարարություն, որպեսզի Երևան քաղաքի սպորտային կյանքում մեծ դեր և նշանակություն տանք այն մարզաձևերին, որոնք օլիմպիական են և մեր երկիրն ամբողջ աշխարհում ներկայացնելու հնարավորություն են ստեղծում: Արդեն սկսել ենք այդ գործընթացը, այսօր նաև դպրոցների տնօրեններն ունեն հստակ հանձնարարականներ՝

ներկայացնելու գործունեություն ծավալող կազմակերպությունների ցանկերը: Այդտեղ նույնպես մի շարք խնդիրների ենք հանդիպում, որովհետև ժամանակացույցներում կան խախտումներ: Այս խնդրին գալիս է համակցելու մյուս խնդիրը, այն է՝ շատ դեպքերում մեր սպորտդպրոցները մարզումներն անցկացնելու համար չունենալով սեփական տարածքներ, պարապմունքներն անցկացնում են հանրակրթական դպրոցներում և եղել է ժամանակ, երբ հանրակրթական դպրոցների ղեկավարությունն առավելություն է սովել վարձակալությանը և մեր սպորտդպրոցները հայտնվել են ուղղակի խնդրողի կարգավիճակում:

Այդ խնդիրը նույնպես լուծում ենք այս փուլում, և մեր սպորտդպրոցները հանրակրթական դպրոցներում պետք է ունենան առավելություն՝ առաջնային պարապմունքներն անցկացնեն մեր ենթակայության դպրոցները, եթե ունենան հավելյալ ժամեր, նոր տրամադրեն մյուս դպրոցներին: Փաստում եմ, որ Ձեր ասածի մեջ ճշմարտության չափաբաժինը շատ մեծ է, որովհետև մարդիկ երկար տարիներ աշխատել են ուղիղ ռեժիմով, իրենց հարաբերությունները կարգավորել են դպրոցի տնօրենների հետ: Երեկ խոսում էի պարոն քաղաքապետի հետ, այն հարյուրավոր նամակները, հարյուրավոր թույլտվությունները, որ ստանում ենք, որ հիմա մենք ունենք տարածքի ավելի մեծացման անհրաժեշտություն, ունենք տարածք ձեռք բերելու և նորը վարձակալելու խնդիր, խոսում է այն մասին, որ այդ մարդիկ երկար տարիներ օգտագործել են այդ տարածքները: Ուղղակի հասել է այն ժամանակը, երբ այդ տարածքի օգտագործումը պետք է դրվի իրավական հիմքերի վրա: Երբ սկսվեց այս գործընթացը, պարոն Խաժակյան, այդ կազմակերպությունները, որոնք առանց իրավական հիմքերի կամ թույլ իրավական հիմքերով քիչ տարածքի համար վճարելով և գործառնականում շատ տարածք օգտագործելով աշխատում են այդ դպրոցներում, պետք է իրենց տեղը զիջեն օլիմպիական մարզաձևերին և այն մարդկանց, ովքեր պատրաստ են հավելյալ վճարելու այդ տարածքների համար:

Այստեղ մեծ կարևորություն ու դեր ունի պետգույքի վարչությունը, քանի որ ինքներդ գիտեք, որ դպրոցների տարածքների վարձակալությունների թույլտվություններն աճուրդային կարգով կազմակերպվում է պետգույքի վարչությունում: Այստեղ նաև իրենց վերահսկողական մեխանիզմները դպրոցների տնօրենների հետ համատեղ պետք է մի քիչ մեծացնել: Շնորհակալություն:

Դավիթ Խաժակյան

-Շնորհակալություն, պարոն Վիրաբյան: Հաջորդ հարցս վերաբերում է ավագանու ԼՈՒՅՍ խմբակցությանը հասցեագրված դիմումին, որը կապված է «Հակատուբերկույրոգային դիսպանսեր» ՓԲԸ-ի հետ, որը համայնքային փակ բաժնետիրական ընկերություն է: Աշխատակիցները մեզ են ներկայացրել մի շարք մտահոգություններ, որոնք ուսումնասիրել և

քննարկել ենք և մտահոգությունների առանցքը, կարծես թե, առողջապահության նախարարության կողմից նախաձեռնվող փոփոխություններն են, որի արդյունքում հնարավոր է մեր ՓԲԸ-ն ունենա ֆինանսական խնդիրներ, ինչի արդյունքում նաև փակվի, որովհետև գիտենք, որ ֆինանսավորումն իրականացվում է նախարարության կողմից:

Մեզ հասցեագրված դիմումում մի ուշագրավ հանգամանք է ներկայացված, որ հիվանդների **60-80** տոկոսը վերջնական ախտորոշում ստանում են հենց այս դիսպանսերում, ինչը նշանակում է, որ բացակայության պարագայում սրա այլընտրանքը կլինի Աբովյան քաղաքում գործող համանման կազմակերպությունը, որը, կարծում եմ, մեր բնակիչների համար լրացուցիչ դժվարություն է առաջացնելու: Եթե իսկապես նախարարությունը նման փոփոխություն է նախաձեռնում, կարծում եմ, պետք է ստանձնենք մեր բնակիչների շահերի պաշտպանությունն այն տեսանկյունից, որ ձգտենք ավելի հասանելի դարձնել վերջիններիս այս ծառայությունը, ոչ թե հեռացնել: Ներկայացված փաստարկներում նշված է, որ այն հնարավորությունները, որոնք կան պոլիկլինիկաներում այս տեսակի հիվանդությունները կանխարգելելու, բուժելու համար, բավարար չեն միայն սեփական միջոցներով:

Այս դիսպանսերի գոյությունը և արդիականացումը մեծ կարևորություն ունի: Պարոն քաղաքապետ, կցանկանայի իմանալ խնդրի մասին ի՞նչ տեսակետ ունեք և հարցի վերաբերյալ առողջապահության նախարարության հետ ի՞նչ քննարկումներ են եղել:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

Սերգեյ Հարությունյան

-Շնորհակալություն: Այո, հակատուբերկուլյոզային դիսպանսերի հետ կապված բավականին երկար ժամանակ է քննարկումների մեջ ենք: Խնդիրը հետևյալն է՝ հիմնարկն իր գործունեությամբ շատ կարևոր դեր է կատարում Երևան համայնքի առողջապահության ոլորտում և մատուցում է բարձր որակի և նեղ մասնագիտական ծառայություն: Այո, շատ ճիշտ նշեցիք, պարոն Խաժակյան, վերջնական ախտորոշումը կատարվում է հենց հակատուբերկուլյոզային դիսպանսերում, քանի որ նեղ մասնագետների և նեղ մասնագիտական սարքավորումների արդյունքում է պարզ դառնում քաղաքացին տուբերկուլյոզով հիվանդ է, թե՛ ոչ:

Մենք քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության հետ տարվա սկզբին ներկայացրել էինք մի ծրագիր, որով նպատակահարմար էինք գտնում օպտիմալացնել հակատուբերկուլյոզային դիսպանսերի և առաջնային օղակում գործող հակատուբերկուլյոզային բժիշկների գործառնությունը, ինչի արդյունքում պետության ծախսերից

բավականին գումար կտնտեսվեր: Այժմ աշխատում ենք և ուղղված նամակի պատասխանի շուրջ ստեղծվել է աշխատանքային խումբ, որն ուսումնասիրում է բոլոր խնդիրները: Նաև ասեմ, որ այս տարի հակատուբերկուլյոզային դիսպանսեր այցելել են նաև համաաշխարհային առողջապահության հիմնարկից, բավականին բարձր են գնահատել դիսպանսերի աշխատանքը:

Ավելի մանրամասն ասեմ, պարոն Խաժակյան, հենց այս պահին աշխատանքային խմբով ուսումնասիրություն ենք կատարում. ի՞նչ է առաջարկում առողջապահության նախարարությունը, ի՞նչ ունենք մենք առաջարկելու, այդ մասին ավելի մանրամասն կարող է ներկայացնել պարոն Բաբինյանը:

Հայկ Մարության

-Հարցին կանդրադառնա աշխատակազմի առողջապահության վարչության պետ Կամսար Բաբինյանը, խնդրեմ:

Կամսար Բաբինյան

-Շնորհակալություն հարցի համար: Պարոն Խաժակյան, նշեմ, որ այդ աշխատանքային խմբով աշխատում ենք, որպեսզի նախարարության գրությանը պատասխան ուղարկենք: Առաջարկում ենք, որ պոլիկլինիկաներում գործող տուբերկաբիոտները միավորվեն քաղաքային տուբերկապանսերում, որով քաղաքային տուբերկապանսերը կդառնա շատ հզոր և կարևոր օղակ, որը նեղ մասնագիտացած կենտրոն է և իր բոլոր գործառույթները կիրականացնի: Պոլիկլինիկաներն այսօր տեխնիկապես այնքան հագեցած չեն, որ կարողանան տուբերկուլյոզը վերջնական ախտորոշել: Դուք իրավացիորեն նշեցիք, որ Երևանում տարեկան կտրվածքով մոտավորապես 300 տուբերկուլյոզի նոր դեպք է արձանագրվում, որից 70 տոկոսն իրականացվում է քաղաքային տուբերկապանսերում: Բացի այդ՝ տարեկան շուրջ 5000 այցելություն է լինում քաղաքային տուբերկապանսեր և, եթե այն փակվի, նշանակում է մեր համաքաղաքացիները պետք է գնան Աբովյան քաղաքի համանման հիվանդանոցը՝ հետազոտություն անցնելու համար: Այսինքն՝ աշխատում ենք, ունենք առաջարկներ առողջապահության նախարարությանը ներկայացնելու համար, Ձեզ լրացուցիչ կտեղեկացվի:

Դավիթ Խաժակյան

-Շնորհակալություն, պարզապես ամրագրեմ, որ այս բուժառայությունից օգտվում է մեր բնակիչների ամենախոցելի շերտը, ուստի՝ կարծում եմ, որ պարոն Արսեն Թորոսյանը պետք է այս հանգամանքի հետ հաշվի նստի: Հասկանալի է, որ ֆինանսավորումն իրականացվում է առողջապահության նախարարության միջնորդությամբ, սակայն կարծում

եմ սա մեզ համար կարևոր նշանակություն ունի, և մենք ևս հարցին հետևողական ենք լինելու:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Չաքարյան, խնդրեմ:

Լևոն Չաքարյան

-**2019թ.** հունիսի **13**-ին Մոսկովյան փողոց **հ. 28** շենքի առաջին հարկում գործող չինական ռեստորանի արտաքին օդատար երեք խողովակներում հրդեհ է բռնկվել: Դա նրա արդյունք է, որ բնակարանների անմիջապես ներքևում, փակ տարածքում շահագործվում է բաց կրակով մանդալ: Հրդեհի օջախից **20-30** սմ հեռավորության վրա գտնվում են առաջին բնակելի հարկի բնակարանի գազի տաքացուցիչը, շենքի անցնող գազի խողովակները և վերելակի էլեկտրալարերը: Շենքի բնակիչները, թե հրդեհից առաջ, թե հետո դիմել են ապօրինի մոնտաժված խողովակներն ապամոնտաժելու պահանջով: Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալի հուլիսի **2**-ի պատասխան գրությունում նշվում է, որ գրություն է ուղարկվել տվյալ ընկերությանը, որպեսզի ձեռնարկեն համապատասխան միջոցներ **5**-օրյա ժամկետում ապամոնտաժելու համար: Մինչ օրս դա չի կատարվել, կցանկանալի իմանալ պատճառը, թե ինչու՞ ապօրինի մոնտաժված խողովակները դեռևս չեն ապամոնտաժվել:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Վիկտոր Մնացականյանը, խնդրեմ:

Վիկտոր Մնացականյան

-Պարոն Չաքարյան, հիշում եմ այդ դեպքը, դրանից **20** րոպե հետո մենք արդեն տեղում էինք: Դուք իրավացի եք, եզակի տեղերից է, որտեղ բաց կրակով խորոված են արել: Այնտեղ գազի վառարանից դուրս եկող խողովակները սխալ են միացրել, յուղերը կուտակվել են, կրակի ժամանակ տաքացել է և հրդեհ է բռնկվել:

Տեսե՞ս վարողի հետ բանակցել ենք, որ դիմացի ավտոտնակում կազմակերպեն այդ գործընթացը: Նրանք **1-3** ամիս ժամանակ էին խնդրել, որպեսզի այդ ամբողջ մեխանիզմը տեղափոխեն: Այդ ժամկետը դեռ չի ավարտվել, մոտ **20** օր առաջ ենք այնտեղ եղել, բնակիչներից կա բողոք, հիմնականում **2**-րդ և **3**-րդ հարկի բնակիչներից: Այստեղ մի խնդիր կա, որը, ցավոք, հստակ կարգավորված չէ, մենք այդ մասին կարծես խոսել ենք և, որպես ավագանու անդամ, Ձեր օգնությունն էի խնդրել: Պետք է հստակ ձևակերպել, թե ինչ է նշանակում ապօրինի ծխատար, որովհետև այդտեղ շատ թույլ են և՛ վարչական շրջանի, և՛ քաղաքապետարանի լիազորությունները: Մենք անգամ դիմել ենք համատիրություն,

որպեսզի իրենց ուժերով ապամոնտաժեն այն, ի սկզբանե նրանք պետք է թույլ չտային դա իրականացնել:

Անկեղծ ասած, չգիտեմ ավագանու համապատասխան հանձնաժողովում ուր է հասել այդ քննարկումը, բայց այդ խնդիրը մենք ունենալու ենք կենտրոնում բոլոր տեղերում: Մենք ունենք հարյուրավոր, եթե ոչ հազարավոր ռեստորաններ, որտեղ բնակիչների հետ ունենք այդ նույն խնդիրը: Արդյոք սա լինելու է նախադեպ, որպեսզի հետագայում կարգավորվի սրճարանների, ռեստորանների և շենքերի պատերի վրա բարձրացող այդ ծխատարների տեղադրելու թույլտվությունը, մերժելու հիմքերը, ինչպես նաև ապամոնտաժելու հարցը, այստեղ կա օրենքի բաց:

Այս հարցի հետաձգումը կապված էր տնտեսվարողի հետ, նա ժամանակ էր խնդրել, որպեսզի կարողանա վառարանը տեղափոխել դիմացի ավտոտնակներից մեկը: Մոտ օրերս կձշտենք, թե ինչ փուլում է գտնվում խնդրի լուծումը:

Լևոն Զաքարյան

-Պարոն Մնացականյան, ես հասկանում եմ, բայց ինձ համար օրենքի ոչ մի բաց չի կարող ավելի կարևոր լինել, քան՝ բնակիչների անվտանգությունը: Տվյալ ռեստորանը գոնե պետք է դադարեցնեն այդ մասով աշխատանքները, որովհետև կա կոնկրետ փաստ, եղել է հրդեհ: Այսինքն՝ մենք սպասում են հրդեհը մեծ լինի, լավ տարածում ունենա, չկարողանանք հանգցնել, նոր հասկանանք, որ օրենքի ոչ մի բաց քաղաքացու կյանքից կարևոր չէ:

Վիկտոր Մնացականյան

-Այստեղ հիմքերն էլ են շատ թույլ, ցանկալի կլինի, որ պարոն Զաքարյանը, որպես ավագանու անդամ, ինչպես նաև բողոքողներից մեկն էլ, որ իրավաբան էր, ցույց տան, թե ի՞նչ իրավական հիմքերով կարող ենք դա անհապաղ հեռացնել, մենք հենց երկրորդ օրը դա կհեռացնեինք:

Լևոն Զաքարյան

-«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի վերջին պարբերության և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն:

Վիկտոր Մնացականյան

-Դրանք քննարկել ենք իրավաբանի հետ, փոքր-ինչ վիճելի են, այստեղ մենք պետք է շարժվենք օրենքով:

Լևոն Զաքարյան

-Երկրորդ հարցս վերաբերում է տրանսպորտային նոր համակարգի ներդրմանը: Կցանկանայի հստակ հասկանալ, որ փուլում է այդ գործընթացը, ինչպես նաև ներկա

վիճակում ինչ անելիքներ կան, որպեսզի մինչև տրանսպորտային նոր համակարգ ունենալը, կարողանանք երևանցիներին բավարար սպասարկել, շնորհակալություն:

Հայկ Մարություն

-Տրանսպորտային նոր ցանցի հետ կապված պարոն Մարգարյանն ավելի մանրամասն կներկայացնի, ես ասեմ ինչ գործողություններ են արվել: Ճիշտ է՝ այդ մասին լրատվամիջոցների միջոցով տեղեկացրել ենք նաև քաղաքացիներին: Այսօրվա ցանցում գործող բոլոր տնտեսվարողների հետ եղել է ընդհանուր հավաք, իրենց նույնպես ներկայացվել են մեր անելիքները, որպեսզի իմանան ինչ է սպասվում քաղաքում, ինչ է սպասվում իրենց: Առաջարկություն է եղել նաև, որպեսզի իրենք էլ ինչ-որ մասնակցություն ունենան ապագա ցանցի ներսում, տրվել է ժամանակ, կարծեմ, միայն մեկ տնտեսվարող է ցանկություն հայտնել մասնակցություն ունենալ:

Հաշվի առնելով, որ հաջորդ տարվա ընթացքում, մոտավորապես, **400** միկրոավտոբուս արդեն դառնում է **15** տարեկան և օրենքի ուժով, բնականաբար, այլևս չեն կարող աշխատել ցանցում, պետք է փոխարինվեն: Այս պարագայում, եթե տնտեսվարողները դա չանեն, այսինքն՝ իրենք նպատակահարմար չգտնեն շարունակելու իրենց գործունեությունը, ապա այդտեղ պետք է խաղի մեջ մտնի քաղաքապետարանը: Այսօր մենք այդ հարցով արդեն բանակցում ենք կառավարության հետ, որպեսզի կարողանանք դրան լուծում տալ:

Հարցին մանրամասն կանդրադառնա քաղաքապետի առաջին տեղակալ Հրայր Մարգարյանը, խնդրեմ:

Հրայր Մարգարյան

-Շնորհակալություն, ինչպես պարոն քաղաքապետը նշեց այդ ուղղությամբ աշխատանքներն իրականացնում ենք, բացի այդ՝ մենք այժմ համագործակցում ենք կառավարող մի օպերատորի հետ: Փորձում են հասկանալ, թե ինչ տեխնիկական պայմաններ են անհրաժեշտ լինելու, որպեսզի հետագայում կարողանանք մրցույթ հայտարարել, օպերատորական սպասարկում իրականացնելու հետ կապված: Կցանկանայի նաև նշել մետրոպոլիտենը, քանի որ դա տրանսպորտային համակարգի բաղկացուցիչ մաս է: Մետրոպոլիտենում քաղաքացիների ակտիվության հետևանքով երբեմն, կարելի է ասել, վազոններում խցանումներ են լինում, նախատեսում ենք ունենալ երկու նոր միջանկյալ վագոն: Ինչպես նաև կառավարության հետ բանակցությունների մեջ ենք, հավելյալ դրամական միջոցներ են տրամադրելու, մոտավորապես՝ **4** մլդ. դրամի չափով, որը նույնպես մետրոպոլիտենում կներդրվի կապիտալ շինարարության աշխատանքների վրա: Այս պահին այսքանը, կարծում եմ մոտ ժամանակներս, երբ վերջնական ճշգրտված ունենաք ողջ տեղեկատվությունը, մանրամասն հանդես կգանք համապատասխան հայտարարությամբ:

Նշեմ նաև, որ ընթացքում մեր ունեցած **800**-ից ավել կանգառների գույքագրումը և չափագրումն ենք իրականացնում էլեկտրոնային տեսքով, որպեսզի հասկանանք, թե որ կանգառում կոնկրետ ինչ աշխատանքներ պետք է իրականացվեն: Աշխատանքներ տարվում են, այնպես չէ որ սպասում ենք, երբ պետք է ֆինանսական միջոցները լինեն, որպեսզի ինչ-որ բան անենք:

Ինչ վերաբերվում է տնտեսվարողներին, ճիշտ է՝ արձագանքը միայն մեկ հոգուց է եղել, բայց գրություն ենք պատրաստել, որպեսզի բոլոր տնտեսվարողներին ևս մեկ անգամ գրավոր ներկայացնենք քաղաքապետի առաջարկը:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Թեհմինա Վարդանյան, խնդրեմ:

Թեհմինա Վարդանյան

-Շնորհակալություն: Ամիսներ են արդեն անցել, ինչ մենք անվանափոխել ենք Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոցը: Բհարկե, մինչ այս պահը ինձ համար առեղծված էր, թե ինչպես եղավ, որ երեքից միայն մեկը Սուրբ եղավ: Պարոն քաղաքապետ, Դուք էլ ասացիք, բնական է, որ Գրիգոր Լուսավորիչը Սուրբ է՝ փոքր-ինչ կասկածի տակ դնելով մնացածին:

Ինչևէ, դժվա՞ր է ցուցանակ պատրաստելը, ու՞մ և ինչի՞ն ենք սպասում: Հայաստանը, Երևանն այսօր աշխարհի ուշադրության կենտրոնում են, եթե ձեզ համար դա կարևոր չէ կամ պատճառաբանելու էք գումար, բյուջե և այլն, ապա ասեք ես իմ միջոցներով ցուցանակը կփոխեմ: Ամիսներ են անցել, բայց ավագանու որոշումն ի կատար չի ածվում: Ինչու՞մն է խնդիրը:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, ասեմ, որ նման բան չեմ ասել, առաջին անգամ եմ լսում:

Թեհմինա Վարդանյան

-Ես կտարածեմ Ազատություն ռադիոկայանին տված Ձեր հարցազրույցը:

Հայկ Մարության

-Ինչ ասեմ, տարածեք:

Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

Սերգեյ Հարությունյան

-Տիկին Վարդանյան, ինչ վերաբերում է դժվարություններին, բնականաբար, ոչ մի տեսակի դժվարություն չկա, երբևէ չենք ասի, որ ֆինանսական միջոցներ չկան: Այն բոլոր խնդիրները, որոնց մասին Դուք բարձրաձայնեցիք, չեմ արձագանքելու այդ բառերին, պարզ

կասեմ ինչու՞մն է խնդիրը: Ավագանու որոշումն ուժի մեջ է մտել հենց նիստից հետո, այսինքն՝ փողոցը, բնականաբար, վերանվանվել է Սուրբ Գրիգոր Լուսավորչի անվամբ:

Ինչ վերաբերում է ցուցանակներին, ասեմ, որ այս պահին չենք փակցնում ոչ մի նոր ցուցանակ, որովհետև քաղաքապետի հանձնարարականով իրականացվում է համալիր աշխատանք, որպեսզի ողջ քաղաքը լինի միատեսակ ցուցանակով, ինչպես բոլոր զարգացած երկրներում: Մենք ամբողջը գույքագրել ենք, հիմա քաղաքում տարբեր տարիներից ժառանգած ցուցանակներ կան: Սովետական շրջանից մնացած էմալապատ ցուցանակներ կան, վերջին սերնդի էլեկտրոնային, թուջե ձուլվածքով, ձեռագործ և այլն: Շատ տարբեր տեսակներ կան, որը շատ վատ է, որովհետև քաղաքը չունի մի տեսակի ցուցանակ:

Այս հարցը եղել է մեր նախընտրական ծրագրում: Խոստանում եմ Ձեզ, որ մոտ ժամանակներս այդ գործընթացի մասին տեղեկացված կլինեք, և քաղաքը շուտով կունենա միատեսակ ցուցանակներ՝ փողոցների անունները, թվանշումները նշված: Այս փողոցն էլ, բնականաբար, կլինի նոր անվանմամբ:

Թեհմինա Վարդանյան

-Շնորհակալություն, եթե իսկապես խնդիրը դա է, որովհետև ես էլ եմ կիսում ցուցանակների տարատեսակ լինելու հետ կապված Ձեր անհանգստությունն ու մտահոգությունը:

Երկրորդ հարցս հնչեցնեմ. արդեն **2,5** տարի է ինչ ընտրված եմ Երևանի ավագանու անդամ և հիմնական գործունեությամբ զբաղվել եմ առողջապահության ոլորտով: Պարոն Բաբինյանի հետ այնքան ենք վիճել, որ այլևս թեմա չի մնացել: Վերջին **2** տարին ամբողջ խմբակցությունով ենք զբաղվել առողջապահության ոլորտով և դա որոշակի արդյունք տվեց, քանի որ պարոն Բաբինյանը, դեռևս սեպտեմբեր ամսվա սկզբին, **2020**թ. բյուջեի հետ կապված իր մտքերը որոշեց կիսել նաև խմբակցությունների հետ, ինչը շատ գովելի է: Մյուս վարչությունների պետերը, փոխքաղաքապետերը խմբակցությունների հետ քննարկելու բան չունեն, ոչ միայն ԼՈՒՅՍ խմբակցության, այլ առհասարակ ավագանու խմբակցությունների հետ: Բյուջեի նախագծի հետ կապված որևէ քննարկելու բան չկա, որովհետև արդեն պատկերացնում եմ, գալու է բյուջեի քննարկման վերջին օրը, հանձնաժողովի նիստ է լինելու, քանի որ բոլոր տեղերը մեծամասնություն են, ձեռք են բարձրացնելու, քվեարկելու են ու դա անցնելու է: Կարելի է չե՞ ամիսներ առաջ մտածել, առաջարկ անել, ոչ թե **120-130** առաջարկ անենք, միանգամից մերժվի: Վերջին օրը գանք նիստերի դահլիճ, ասեն ԼՈՒՅՍ խմբակցությունը վատն է, որովհետև միշտ բողոքում է բյուջեից: Ոչ ոք մեզ հետ քննարկելու ոչինչ չունի՞ այդ նախագծի հետ կապված:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Մարգսյանը:

Հայկ Մարգսյան

-Շնորհակալություն, տիկին Վարդանյան քննարկելու բան Ձեզ հետ միշտ ունենք և դա միշտ անում ենք սիրով: Ինչ վերաբերում է բյուջեին, ապա կա «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենք և բյուջետային գործընթացը կարգավորող համապատասխան նորատիվ ակտեր, որոնք սահմանում են բյուջետային գործընթացի մեկնարկը և դա ցուցիչ է ավագանու խմբակցություններին: Այնտեղ նկարագրվում է նաև, թե այդ գործընթացն ինչպես է գնում: Ավագանու խմբակցությունները կարող են իրենց կողմից նախընտրելի հաջորդ տարվա բյուջետային ծրագրերի մասին կազմել առաջարկություններ և ներկայացնել ֆինանսական վարչությանը քննարկման համար:

Որևէ խմբակցության մենք գրություն չենք ուղարկում, չի եղել նման փորձ և չի կարող լինել, որ ասենք մեզ առաջարկներ տվեք: Մենք ունենք մեր տեսլականը և ծրագրերը, որոնց շրջանակում բյուջետավորում ենք իրականացնում: Արդեն ունենք ԻՍ ՔԱՅԼԸ խմբակցության կողմից ներկայացված առաջարկությունների մեծ փաթեթ, մյուս խմբակցություններից առաջարկներ չունենք: Այնպես որ՝ առաջարկելու և քննարկման հրավիրելու նախաձեռնությունը չպետք է մեզնից ակնկալել, այլ գուցե խմբակցությունները, եթե ունեն մտքեր կամ կարծիքներ:

Թեհմինա Վարդանյան

-Պարոն Մարգսյան, այս անգամ Ձեզ չէի հարցս ուղղում, բայց փորձեցիք հարվածը Ձեզ վրա վերցնել:

Հայկ Մարգսյան

-Տիկին Վարդանյան, ես այդտեղ հարված չտեսա:

Թեհմինա Վարդանյան

-Այնուամենայնիվ, բյուջեի նախագիծը ներկայացնողը Դուք եք և Դուք պետք է տաք նախագիծ, որի հիման վրա մենք անենք մեր առաջարկները, սա ինչ վերաբերում է առաջարկներին: Սակայն մինչև նախագծերը ներկայացնելը, տեսլականը կարելի է ներկայացնել, ինչպես արեց պարոն Բարինյանը, ինչը շատ արդյունավետ էր և հաճելի, բազմաթիվ հարցեր քննարկեցինք: Պետք չէ նախագիծը պատրաստ ներկայացնել, նոր քննարկել:

Հայկ Մարգարյան

-Պարոն Բաբինյանը, հավանաբար, Ձեզ հետ քննարկել է առողջապահության իր տեսլականը՝ որպես առողջապահության համակարգի ներկայացուցչի և հուսամ, որ ոչ որպես խմբակցության:

Թեհմինա Վարդանյան

-Միայն մեր խմբակցությանը չի ներկայացրել, ավագանու բոլոր խմբակցությունները եղել են և ցավալի է, որ 57-հոգանոց խմբակցությունից 1 կամ 2 հոգի է եղել, դրան չանդրադառնամ:

Հայկ Մարգարյան

-Բյուջետային գործընթացում նման ֆորմատ չունենք և չենք կարող ունենալ:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Իզաբելլա Աբգարյան, խնդրեմ:

Իզաբելլա Աբգարյան

-Պարոն քաղաքապետ, ցանկանում եմ հնչեցնել այս օրերին քաղաքացիների կողմից շատ հաճախ տրվող հարցը: Հոկտեմբերի 19-ին մենք նշելու ենք Երևանի տոնը և մարդիկ ցանկանում են իմանալ, ինչ սպասել, որովհետև դեռ որևէ բան պարզ չէ: Ե՞րբ պարզ կլինի ծրագիրը, ի՞նչ տրամաբանությամբ է այն իրականանալու և արդյոք ինչ-որ կենտրոնական միջոցառում ևս նախատեսված է լինելու, բացի վարչական շրջաններում նախատեսվող առանձին միջոցառումներից:

Հայկ Մարության

-Շատ հետաքրքիր է, որ քիչ առաջ, երբ շփվում էի լրագրողների հետ, ոչ ոք այդ հարցն այդպես էլ չտվեց: Այս տարի գնացել ենք ապակենտրոնացման ուղղով, որոշում է կայացվել, որ բոլոր վարչական շրջանները հավասարապես ունենալու են նույն կարգի միջոցառում: Չի լինելու մի մեծ, կենտրոնական միջոցառում և ինչ-որ փոքրիկ միջոցառումներ մյուս վարչական շրջաններում: Օրինակ՝ Նուբարաշեն և Դավթաշեն վարչական շրջաններում լինելու են նույն տիպի միջոցառումներ, ինչ որ լինելու է Կենտրոն և Արաբկիր վարչական շրջաններում: Նախատեսվում է նաև փակ միջոցառում, որը տեղի է ունենալու հոկտեմբերի 19-ին ժ. 19.00-ին Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում, որն ուղղակի լինելու է զեկույց, թե ի՞նչ է արվել, ի՞նչ աշխատանք է կատարվել: Ընդհանուր ներկայացվելու է այս ամենը:

Բյուջեի մասով ասեմ, որ նախատեսված է եղել մոտավորապես 190 մլն դրամ, բայց եղել են տենդերներ, մրցույթներ, շատ թեժ պայքար է եղել: Ի տարբերություն այլ տարիների՝ այս տարի կա 10 մասնակից, վերջնական պայմանագրերը, կարծես թե, դեռ կնքված չեն:

Վերջնական արդյունքները երբ լինեն, հստակ թվերը կիմանանք, մոտ **150** մլն. կարգի է լինելու, բայց վերջնական չէ սա, հստակ պարզ կլինի, երբ գործընթացն ավարտվի: Մրցութային գործընթացը շատ դժվար է մշակութային ոլորտում, որովհետև շատ բարդ է բնութագրի մեջ նկարագրել, թե ինչպես ես, մոտավորապես, այդ ամենը պատկերացնում, սա տեխնիկական բնութագիր չէ, որ հստակ նշվի ինչ է անհրաժեշտ: Այստեղ կա սցենար, մտահղացում, իրականացում, ռեժիսուրա և այլն, որի բնութագիրը դժվար է հստակ ներկայացնել:

Հարցին մանրամասն կանդրադառնա քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը, խնդրեմ:

Տիգրան Վիրաբյան

-Շնորհակալություն հարցի համար: Տիկին Աբգարյան դեռ հուլիս ամսին, գործակարգավարական խորհրդակցության ժամանակ, պարոն քաղաքապետը հանձնարարեց Էրեբունի-Երևան տոնակատարությունների շրջանակներում և՛ բյուջեն, և՛ միջոցառումների հիմնական ցանկը հավասարապես բաշխել **12** վարչական շրջանների միջև: Այդպես էլ արվեց և հայտարարվեցին մրցույթները:

Ի դեպ ասեմ, որ կար նաև հստակ հանձնարարական մրցույթներն անել ոչ մի չափաբաժնով, ինչպես արվում էր ընդհանրապես, որպեսզի մանր և միջին կազմակերպություններին ևս հնարավորություն տրվեր մասնակցելու մրցույթներին: **13** առանձին չափաբաժիններով հայտարարվեց Էրեբունի-Երևան տոնակատարության մրցույթը: Թե՛ մրցակցություն էր, կազմակերպությունները բավականին շատ էին, որոնք ցանկություն ունեին տարբեր վարչական շրջաններում կազմակերպել միջոցառում: Վերջնական արդյունքում ամենացածր գին առաջարկած **7-8** կազմակերպություն, արդեն իսկ հնարավորություն ունի կազմակերպելու միջոցառումները, այդ թվում նաև Ալեքսանդր Մպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում կայանալիք պաշտոնական միջոցառումը: Միջոցառումները լինելու են ողջ օրվա ընթացքում:

Խնդիր ենք դրել մեր առաջ, որ ողջ օրվա ընթացքում կայանալիք միջոցառումների ժամանակ ներկայացնենք Երևան քաղաքի մանկապատանեկան ստեղծագործական խմբերի, մեր կոլեկտիվների ներուժը:

Ես կարծում եմ, որ ամեն տարի Էրեբունի-Երևան տոնակատարությունը նաև պետք է լինի մշակութային հաշվետվություն, թե ամբողջ տարվա ընթացքում և՛ վարչական շրջանները, և՛ վարչական շրջանների ենթակայության մշակութային կազմակերպություններն ինչ հաջողություններ են ունեցել, ինչ են պատրաստել, ինչ

մրցույթների են մասնակցել, ովքեր են հաղթողները և լավագույնները: Բնականաբար՝ ժ. 19.00-ից բոլոր վարչական շրջաններում կլինեն տարբեր ոճային համերգներ՝ ռոք, փոփ, ժողովրդական, ռետրո, ազգային, ջազային, դասական, հեղինակային և էստրադային երգեր: Կարևոր նախադեպ ենք ստեղծում, երբ փոքր կենտրոնից միջոցառումների հիմնական ուժը տեղափոխում ենք վարչական շրջաններ: Սա չի կրում զուտ սիմվոլիկ բնույթ, որ մենք միջոցառման բյուջեի 90%-ը նախատեսենք մեկ համերգի համար, 10%-ը բաշխենք մյուս վարչական շրջաններին՝ այնտեղ զուտ երաժշտության ձայն ապահովելու համար: Այլ լավագույն կատարողներին և խմբերին բաշխում ենք Երևան քաղաքի ամբողջ տարածքում:

Հոկտեմբերի 10-ին կլինի ասուլիս, որի ժամանակ ավելի մանրամասն կներկայացնենք, թե որ վարչական շրջանում ինչ է տեղի ունենալու: Վաղը ողջ օրվա ընթացքում հանդիպում կունենանք վարչական շրջանում և՛ կազմակերպիչների, և՛ վարչական շրջանի ղեկավարի համապատասխան բաժինների ներկայացուցիչների հետ: Յուրաքանչյուր վարչական շրջանում արդեն կհստակեցնենք, թե ինչ ծրագիր և ծավալ ենք ներկայացնում:

Ինչ վերաբերում է Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում կայանալիք միջոցառմանը, որպեսզի հետագա շահարկումներից խուսափենք՝ նշեմ, որ էլիտար միջոցառում չէ, որը զուտ ընտրված մասսայի համար լինի: Սա պաշտոնական միջոցառում է, որտեղ հնչելու են հաշվետվություններ, լինելու են պարզևատրման արարողություններ: Այնտեղ մշակութային մասը գերակշիռ չէ, դրա համար հրավիրվում են հատուկ այն մարդիկ, ովքեր պաշտոնական միջոցառման հրավերների ցանկում են: Չէի ցանկանա, որ սա թյուրըմբռնման առիթ հանդիսանար: Տվյալ միջոցառումը նկարահանվելու և ցուցադրվելու է Հայաստանի հանրային հեռուստատեսության ուղիղ եթերում: Մեր քաղաքացիները և Հայաստանի բնակիչները հնարավորություն կունենան հետևելու այդ միջոցառմանը, 45 րոպե տևողությամբ միջոցառում է, որը կսկսվի ժամը 19.00-ին:

Իզաբելլա Աբգարյան

-Շնորհակալություն, երկրորդ հարցս. արդյոք նախատեսված է համաքաղաքային, աշնանային ծառատունկ, մասնավորապես, շատ են հարցնում Սարալանջում տնկվելու՞ են այս տարի ծառեր:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրայր Սարգսյանը, խնդրեմ:

Հրայյա Մարգայան

-Շնորհակալություն հարցի համար, անկեղծ ասած, հենց նոր եմ նախահաշիվները ստացել Սարալանջի, Նուբարաշենի և Սիլիկյանի, բայց այնտեղ ոռոգման ցանցի ահռելի մեծ աշխատանքներ պետք է իրականացվեն: Այդ պատճառով նախագիծն ամբողջությամբ վերանայելուց հետո, ենթադրում ենք, որ այս տարի Սարալանջի այդ հատվածում, որտեղ նախատեսում ենք խոշոր ծառատունկ ունենալ, միայն կիրականացնենք ոռոգման ցանցի անցկացումը, ապա գարնան սկզբին կիրականացնենք ծառատունկը: Այնտեղ նաև փոքր-ինչ տեխնիկական խնդիրներ կան՝ Սարալանջի թեքության հետ կապված, կարծում եմ քաղաքացիներից ինչ-որ մաս համապատասխան անվտանգ գոտում ծառատունկը կիրականացնի, իսկ մնացած հատվածում մասնագետներ պետք է աշխատեն: Այս պահին այսքանը:

Իզաբելլա Աբգարյան

-Շնորհակալություն, իսկ բացի Սարալանջից, այլ վայրերում նախատեսվո՞ւմ է:

Հրայյա Մարգայան

-Այո, այլ վայրերում ծառատունկ կունենանք, բայց այդպիսի խոշորամասշտաբ չեն լինի, քանի որ դրա համար պետք է նախնական պատրաստություն ունենալ: Ջրի հետ կապված խնդիրներ ենք ունեցել, այսինքն՝ ինքնանպատակ չպետք է լինի այդ ամենը, բայց նախագծերը բավականին մեծ են, օրինակ՝ Աբովյանի պուրակի համար արդեն նախագիծ ենք ներկայացրել:

Պարոն քաղաքապետ, երկու օր առաջ հայտնաբերել ենք, որ Ծիծեռնակաբերդի բարձունքում **8,5** հա տարածքով հող ունենք, որը Երևան համայնքին է պատկանում: Այդ տարածքի համար ևս մրցույթի փաթեթ կնախապատրաստենք, որպեսզի կարողանանք այդ աշխատանքներն իրականացնել: Ցավոք սրտի՝ Երևան համայնքում խոշոր ծառատունկ իրականացնելու համար այդպիսի մեծ վայրեր չունենք, ինչպես նաև այդ տնկած ծառերին հետևելը բավականին դժվար է լինում: Այդ պատճառով, եթե մի տեղ է կենտրոնացված լինելու, նրա վերահսկողությունը և արդյունավետությունն ավելի լավ կլինի:

Երևան քաղաքում ունենք նաև շատ տեղեր, որտեղ ծառերը հատել ենք, կոճղերը մնացել են: Անցյալ տարի որոշ տեղերում տնկել են այդ կոճղերի մոտ, որը սխալ է: Նախատեսում ենք համապատասխան տեխնիկա ձեռք բերել, քանի որ չունենք տեխնիկա, որ կարողանանք այդ կոճղերն ամբողջությամբ հանել, որից հետո այդ վայրերը նոր ծառերով կհամալրենք:

Այս տարվա կանաչապատման աշխատանքները դեռ ընթացքի մեջ են: Տիկին Վարդանյանը, ասում էր չեք ներկայացնում, բայց աշխատանքի փուլում ենք, կարծում եմ մինչև ամսվա վերջ ավարտին կհասցնենք: Այս տարվա բյուջեով ինչ նախատեսել ենք և այն մոտեցումները, որ կանաչապատման հետ կապված ունենք, ամբողջությամբ տեսլականը ցույց կտանք: Մենք փորձում ենք հասցեական լուծումների գնալ, օրինակ Էրեբունի վարչական շրջանում գույքագրել ենք բոլոր փողոցները, թե ինչ տեսակի ծառեր ու թփեր են անհրաժեշտ, ինչ քանակությամբ: Երբ որ գնում իրականացնենք և ձեռք բերենք համապատասխան թփերը, ծառերը, դրանք կտնկվեն համապատասխան վայրերում, իսկ մինչ այս եղել են ինչ-որ քանակությամբ ծառեր, թփեր, մրցույթը հայտարարվել է դրանք ձեռք ենք բերել, տվել ենք վարչական շրջաններին, ինչ-որ տարբեր տեղերում տնկել են: Այսինքն՝ դա այնքան հասցեական չի եղել, իսկ հիմա հնարավորություն կունենանք, որպեսզի հասցեական կանաչապատում իրականացնենք և այդպես շարժվենք առաջ:

Մի համալիր լուծում, օրինակ, Հակոբ Հակոբյան փողոցը, որտեղ նախատեսում ենք ամբողջական փոփոխություն իրականացնել, եզրաքարերը փոխել, ռոտզման ցանցը փոխել, կանաչապատում իրականացնել: Փորձելու ենք այդ մոտեցմամբ առաջ գնալ, որպեսզի մեր կատարած աշխատանքն ակնհայտ լինի, շնորհակալություն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Անի Խաչատրյան, խնդրեմ:

Անի Խաչատրյան

-Անցնեմ հարցերիս, պարոն Դանիելյան, Արաբկիր վարչական շրջանի ղեկավար, կարծում եմ չեք զարմանում, որ կրկին Ձեզ եմ դիմում, որովհետև 2 օր առաջ քաղաքապետարանի միջանցքում հանդիպեցիք Ձեր երկու աշխատակցի, ովքեր ինձ մոտ էին եկել: Որին հաջորդում է Ձեր պոռթկումը, ինչն ինձ շատ է զարմացրել, պարոն Դանիելյան, երեկ վարչական շրջանի ղեկավարի հրամանով պահանջել էք ազատել աշխատասենյակը և շենքը: Պարոն Դանիելյան, այդ մարդիկ դեռ երկու ամիս աշխատելու իրավունք ունեն: Պարոն Դանիելյան, հարցերս կետերով են և, եթե հնարավորություն ունեք, գրառեք, քանի որ ծավալուն պատասխան եմ ակնկալում:

Մի պահ հետ գնանք 2018թ. նոյեմբերի 12-ի Ազատություն ռադիոկայանի մի հաղորդում «Համատիրության կառավարիչ թաղապետը» վերնագրով: Այդ հաղորդման շրջանակում, պարոն Դանիելյան, ասում էք, որ նախկինների թողածը ճոխություն է և Ձեր հանգստի սենյակը մի երեք ամսից կդառնա մեկ ուրիշ աշխատակցի աշխատասենյակ: Ի դեպ՝ ես դեմ չեմ, որ վարչական շրջանների ղեկավարները հանգստի սենյակ ունենան, բայց Դուք

էիք ավելորդություն և ճոխություն համարում: Արդյոք հանգստի սենյակը դարձե՞լ է աշխատասենյակ, թե հարմարվել էք: Ձեր առաջին հանդիպման ժամանակ աշխատակիցներին ասել էք, որ Ձեր խոհարարը Ձեր աշխատակիցներից բարձր աշխատավարձ է ստանում: Արդյոք առաջին հանդիպման ժամանակ ղեկավարն իրավունք ունե՞ր նման կերպ վիրավորեր աշխատակիցներին, այդ պատճառով էլ առաջին իսկ օրվանից չեն ստացվել ձեր փոխհարաբերությունները: Էլ չասեմ, որ մեկ այլ առիթով «թեփեր» էք անվանել Ձեր աշխատակիցներին, իսկ աշխատակիցներին, որոնց հանդիպեցիք քաղաքապետարանի միջանցքում, նրանց հաստիքները կրճատվել են, լավ, ուղարկել էք ծանուցումներ: Արդյոք այն մարդը, ով ստորագրել է այդ ծանուցման տակ, Ձեր աշխատակազմի կառավարման բաժնի պետը, նրա լիազորությունները սահմանվում են իրավական ակտերով և ունի՞ համապատասխան լիազորագիր, որովհետև ինքը գործատու չէ, իսկ ծանուցումների մեջ բացակայում են այն կետերը, որտեղ աշխատանքային օրենսգրքով սահմանված են՝ ժամկետ, աշխատանքի առաջարկ, իսկ եթե չկա աշխատանքի առաջարկի հնարավորություն, գրել՝ չունեմ ազատ հաստիք: Բոլորը բացակայում են Ձեր ուղարկած ծանուցումներում, պարոն Դանիելյան: Մարդկանց համոզում էք և սխալ տեղեկատվություն էք տալիս, որ շուտ ստորագրեք ծանուցումները, որպեսզի գնաք ռեզերվ, բայց օրենքում չկա ժամկետ նույնիսկ ռեզերվի մասին: Հոկտեմբերի 2-ով մարդկանց ազատում էք, դեկտեմբերի 2-ի փոխարեն՝ լավ իմանալով, որ տուգանք էք տալու, միևնույն է՝ միայն ազատվեք այդ աշխատակիցներից, որովհետև նրանք ստորագրել էին Ձեր դեմ, որը հաստատել է նաև Ձեր տեղակալը՝ աշխատակիցներին ասելով. «Բա լավ էր, որ ստորագրում էիք, հիմա ի՞նչ էք էլ ուզում»:

Արդյոք այն մարդը, ով ստորագրել է այդ ծանուցումների տակ, ունի՞ լիազորություն աշխատանք առաջարկելու և այդ դեպքում ինչի՞ էք խախտել, որովհետև վստահ եմ, որ այդ մարդը գործատուն չէ և չունի նման լիազորություն: Ինչի՞ մարդկանց ծանուցումներում չի նշվել այլ աշխատանքի առաջարկ կամ, եթե չունեք այլ ազատ հաստիք, չի նշվել դրա մասին, քանի որ դա օրենքի պահանջ է և արդյոք հարմարվե՞լ էք Ձեր հանգստի սենյակին: Ծնորհակալություն:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Արամ Դանիելյանը:

Արամ Դանիելյան

-Հարգելի քաղաքապետ, ավագանու հարգելի անդամներ, հարգելի գործընկերներ, ես աշխատանքի հետ կապված միշտ ասել եմ, որ պետք է աշխատել թափանցիկ, եթե խնդիրներ

կան, քննադատել և միայն շնորհակալ եմ քննադատության համար, բայց այդ քննադատությունը գոնե լինի կառուցողական, իր մեջ ունենա որոշակի որակ:

Հիմա ըստ էության. նախ աշխատակիցներին ծանուցելու վերաբերյալ ընդհանրապես որևիցե գործողություն և գործառույթ անձամբ ես չունեմ, չեմ արել: Ավագանին աշխատակիցներին կրճատելու հետ կապված իր որոշումը կայացրել է և դրանից հետո համապատասխան ընթացակարգով 12 վարչական շրջաններին նույն ընթացակարգով ծանուցումը քաղաքապետարանից եկել է: Եթե տիկին Խաչատրյանն էմոցիաներից բացի, հարկ համարեր վարչական շրջանի դիրքորոշումն իմանար, ինֆորմացիան վերլուծելու արդյունքում, վստահ եմ, այսօր այս ամբողջ հարցերը չէր բարձրացնի, քանի որ դա ընդամենը մի բանի մասին է հուշում, որ տիկին Խաչատրյանը, ցավոք, անտեղյակ է: Այսինքն՝ վարչական շրջանը և նրա ղեկավարն աշխատակիցներին ծանուցելու հետ կապված որևէ գործառույթ չեն ուեցել: Սա առաջինը

Տիկին Խաչատրյան, ինձ համար սա ավելի շատ ծառայություն է, քան աշխատանք: Ինչ վերաբերում է խոհարարի հետ կապված համեմատությանը, այո, չեմ հերքում, որ ժամանակին ունեի բիզնես և այնտեղ աշխատող խոհարարին իմ կողմից տրված աշխատավարձը համեմատել եմ ոչ թե աշխատակիցների աշխատավարձի հետ, այլ իմ աշխատավարձի հետ, այսինքն՝ այստեղ ևս անտեղին են Ձեր շահարկումները, թե ես ինչ-որ աշխատակցի կամ աշխատակիցների նվաստացրել եմ: Կրկնում եմ՝ ինքս իմ աշխատավարձը համեմատել եմ իմ կողմից խոհարարին տրվող աշխատավարձի հետ և ցույց եմ տվել, որ այստեղ մոտիվացիան ոչ թե աշխատավարձն ու նյութականն են, այլ ծառայություն մատուցելը, որի համար գիտակցաբար ստանձնել եմ այս պատասխանատվությունը: Սա էլ երկրորդը:

Ինչ վերաբերում է Ձեզ մոտ եկած այն աղջիկներին, ուզում եմ ասել, որ, ցավոք սրտի, նրանք են հայտնվել թիրախում, չէի ցանկանա, որ հենց այդ աղջիկները կորցնեն աշխատանքը, սակայն «Համայնքային ծառայության մասին» օրենքով վարչական շրջանի ղեկավարին տրված չէ այդ լիազորությունը ում կրճատի աշխատանքից, ում՝ ոչ: Շեշտում եմ՝ ցավոք, որովհետև դրա արդյունքում հնարավոր է նաև կորցնում ենք արդյունավետ աշխատողների:

Մի քանի նիստ առաջ, եթե հիշում եք, քննարկում էր գնում հենց սրա մասին, որ վարչական շրջանի ղեկավարների պատասխանատվությունը և լիազորությունները չեն համապատասխանում իրար: Եթե համապատասխանեին, այդ ժամանակ ավելի շոշափելի կլինեին մեր կողմից կատարված աշխատանքների արդյունքները: Իսկ հիմա Դուք շահարկում եք մի բան, որն օրենքով ինձ դնում է տվյալ շրջանակների մեջ, և ես իմ

ցանկությամբ չեմ անում: Եթե ունենաք փաստեր, որ ինչ-որ մեկին անձամբ ասել եմ, որ ազատեք սենյակը, խնդրում եմ ներկայացրեք փաստեր, ասացեք այն աշխատակցի անունը, ում միջոցով ես աղջիկներին ասել եմ ազատեք աշխատասենյակը: Իսկ ընթացակարգով, եթե մարդիկ ստացել են ծանուցումներ, որ պետք է ազատվեն, տվյալ բաժնի ղեկավարը հնարավոր է նյութական մասով իրենցից ընդունում-հանձնում պահանջի:

Հանգստի սենյակի հետ կապված՝ տվյալ հաղորդման ընթացքում բացի հանգստի սենյակին անդրադառնալուց, անդրադարձել եմ այն շքեղ գույքին, որը դրված է այդ սենյակում, մասնավորապես, ժամացույցին և այս պահին ևս կողմ եմ և մեծ ուրախությամբ պատրաստ եմ այդ ժամացույցը բարեգործական հիմունքներով տալ որևէ թանգարանի կամ ավելի նպաստավոր ինչ-որ մեկին: Ցավոք սրտի՝ այդ հաղորդման ժամանակ էլի չգիտեի, որ վարչական շրջանի ղեկավարը լիազորված չէ իր սենյակում գտնվող գույքի նկատմամբ որոշակի տնօրինում իրականացնել և այդ մասով ևս ավագանին պիտի որոշի գույքն ինչ անել: Եթե ավագանին կորոշի նվիրատվություն անել, մեծ հաճույքով կնվիրենք ոչ միայն այդ ժամացույցը:

Հանգստի սենյակի հետ կապված՝ քանի որ կրճատումներ են և 4-5-հարկանի շենքում արդեն աշխատասենյակները մոտավորապես 10 տոկոսով ազատվում են, հետևաբար, այո, եթե հարկ լինի, այդ սենյակը կդարձնեմ աշխատասենյակ: Մակայն այսօր աշխատասենյակները թափուր են:

Հայկ Մարության

-Շնորհակալություն:

Անի Խաչատրյան

-Պարոն Դանիելյան, Ձեզ համար վարչական շրջանի աշխատակազմի վարչական շենքը հյուրանոց է, որովհետև տիկին Ռուզաննային, կներեք ազգանունը չեմ հիշում, առաջարկել էք շենքի մենեջեր, նման հաստիք գոյություն ունի՞ վարչական շրջանում:

Արամ Դանիելյան

-Ես նախ խնդրում եմ, որ աշխատանքային կոլեկտիվը, որը բաղկացած է 160 մարդուց, որտեղ կարող են տարբեր կենսամակարդակի, սոցիալական պատկանելության և մտածելակերպով մարդիկ լինել, այդ մարդկանց առօրյա քննարկումները, բամբասանքները չբերել և հասցնել այս բարձր հարթակը: Ինչպես միշտ չեմ մեկնաբանել դրանք, այս պահին ևս չեմ մեկնաբանի:

Կրճատումների վերաբերյալ ավագանու որոշումը եթե ուշադիր նայեք, հարգելիներս կտեսնեք, որ 12 վարչական շրջանից ամենաթանկը տվյալ վարչական շրջանի բնակիչների համար Արաբկիր վարչական շրջանի ուռճացված աշխատակազմն է նստել, այսինքն, միջինը

եղել է **260** դրամ մեկ բնակչի վրա իր աշխատակազմի պահելու ծախսը, Արաբկիր վարչական շրջանում եղել է **300** դրամ: Մեկ բնակչի մասով եմ ասում, որը փաստերով վերլուծության արդյունք է:

Կուզենայի նման լուրջ խնդիրներ բարձրաձայնեին և ասեին, թե ինչպե՞ս է եղել, որ տարիներ շարունակ վարչական շրջանի յուրաքանչյուր ղեկավար գալով փորձել են ավելի ու ավելի ուռճացնել այս աշխատանքային կոլեկտիվը, ինչի արդյունքում երբեմն նաև մարդիկ, այսպես ասած, պատկերացրել են, քիչ ծանրաբեռնվածության պատճառով, ինտրիզներ հրահրելով կամ որոշակի լրատվական միջոցների, ավագանու որոշակի անդամների թերի ինֆորմացիա տալով ամեն ինչ հարթեցվելու է:

Այժմ ամեն ինչ ընկել է իր տեղը և այս մեկ տարվա ընթացքում խորապես ուսումնասիրել եմ Արաբկիր վարչական շրջանին վերաբերող բոլոր հարցերը և մեծ ուրախությամբ յուրաքանչյուրի հետ պատրաստ եմ քննարկումների, բայց աշխատանքային կարգով, ոչ թե բամբասանքների մակարդակում մեկնաբանեմ, թե տիկին Ռուզաննային մենեջեր եմ ասել, թե՝ ինչ: Եթե Դուք կտեսնեք Արաբկիր վարչական շրջանի աշխատակազմում կոնկրետ աշխատողի հրամանում գրված է մենեջեր, որը չի համապատասխանում օրենքին, խնդրեմ այդ մասով շնորհակալ կլինեմ, եթե ասեք:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Աննա Ջավախյան, խնդրեմ:

Աննա Ջավախյան

-Շնորհակալություն, ես մեկ հարց ունեմ, որը վերաբերում է մանկապարտեզների ներառականության խնդրին: Բոլորս գիտենք, երբ երեխաները մանկապարտեզ են ընդունվում, պոլիկլինիկայից պարտադիր ներկայացվում է առողջության մասին տեղեկանք, որը կոչվում է **26** ձև: Այդ տեղեկանքն ստանալու համար երեխաներն անցնում են մասնագետների կաբինետներով, որոշակի հետազոտությունների արդյունքում այդ տեղեկանքը տրվում է: Սակայն շատ տնօրեններ ահագանգում են, որ երեխաներն ընդունվում են մանկապարտեզ, ըստ **26** ձևի նրանք միանգամայն առողջ են, չունեն որևէ առողջական և զարգացման խնդիրներ: Մինչդեռ երեխան սկսում է հաճախել մանկապարտեզ և դաստիարակն առաջին իսկ օրվանից արդեն տեսնում է, որ երեխան ունի, ենթադրենք, զարգացման հետ կապված տարբեր բարդությունների խնդիրներ և այդ երեխան ունի հետագայում իր հետ աշխատող մասնագետի կարիք: Երբ այքաթող ենք անում այդ խնդիրը, երեխաներն այդ օգնությունը չեն ստանում, հետագայում մեծանալով ավելի լուրջ խնդիրների առաջ են կանգնում:

Սակայն, քանի որ, ըստ փաստաթղթի, այդ երեխաները միանգամայն առողջ են, նրանք չեն կարող ընդգրկվել ներառականության ծրագրում և փաստացի դուրս են մնում այդ ծրագրից, ինչը մի շարք խնդիրներ է ստեղծում ինչպես խմբերի բնականոն աշխատանքի, այնպես էլ՝ երեխայի հետագա առողջության համար:

Հարցս այն է, ի՞նչ մեխանիզմներ են մշակվում, ի՞նչ ծրագրեր են նախատեսվում նշած խնդիրը բացառելու և որոշակի լուծում տալու համար: Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

Սերգեյ Հարությունյան

-Շնորհակալություն, տիկին Ջավախյան, կարծում եմ, որ Ձեր բարձրաձայնած հարցի մի մասը վերաբերում է առողջապահական բլոկին, մյուս մասը՝ կրթական: Մենք քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանի հետ մանկապարտեզների հարցերի վերաբերյալ միասին ենք պատասխանատվություն կրում և փորձում բոլոր հարցերին պատասխան տալ: Մի անգամ աշխատանքային քննարկման ժամանակ Դուք այս խնդրի մասին բարձրաձայնեցիք և ասեմ ինչն է խնդիրը: **26** ձևը, ըստ օրենքի, տրամադրվում է առանց երեխայի՝ բժիշկների մոտ այցելելու: Այսինքն, ըստ օրենքի, գուտ երեխայի քարտի տվյալների հիման վրա, առանց երեխայի փաստացի ներկա լինելու լրացվում է **26** ձևը և տրվում է:

Այդ է եղել պատճառը, անցած անգամ Դուք բարձրաձայնեցիք, ասացի խնդիրը հետևյալն է, որ երեխան կարող է գալ, հասնել դպրոց, ունենալ խնդիրներ, բայց, քանի որ օրենքով չի պահանջվել, որ անցնի հետազոտություն, հետազոտություն չի անցել, արդեն դպրոցում ուսուցանելու ժամանակ ի հայտ են գալիս որոշակի խնդիրներ: Հիմա դա փոխվել է և առողջապահության նախարարի նոր հրամանը կա, որով երեխան պարտադիր նորից պետք է անցնի բուժզննում: Պարոն քաղաքապետ, Ձեր թույլտվությամբ պարոն Բաբինյանն ավելի կմանրամասնի:

Հայկ Մարության

-Համեցեք, պարոն Բաբինյան:

Կամսար Բաբինյան

-Շնորհակալություն հարցի համար: Ասեմ խնդիրը որտեղից է սկսվում: **2011**թ. կառավարության որոշումով պոլիկլինիկաներից բավականին մեծ թվով տեղեկանքներ դուրս հանեցին: Երբ ծնողը դիմում է պոլիկլինիկա, ամբուլատոր քարտից տալիս են տեղեկանք, հիմա այս խնդիրն իրավացիորեն էք բարձրացնում և առողջապահության

նախարարությունում այժմ այդ հարցի հետ կապված քննարկումներ են անցկացվում և վերադառնալու ենք նախորդ **026** ձևերին: Այսինքն՝ պետք է պարտադիր նշված լինի ծավալը, երեխան այդ ծավալը պետք է անցնի, նոր երեխային տրվի տեղեկանք առողջության մասին:

Աննա Ջավախյան

-Պարոն Բաբինյանը ճիշտ է ասում, այդ քաղվածքն է, որի համար երեխան հետազոտություն չի անցնում: **26** ձևի համար երեխան անցնում է հետազոտություն, բայց, ճիշտն ասած, երեխաները հիմա մանկապարտեզ **26** ձևով են ընդունվում: Հիմա ասեմ այն, ինչ նկատել եմ. հաճախ երեխային կաբինետներով անցկացնելու ժամանակ բժիշկը ծնողին հարցնում է, թե բողոք ունե՞ն, ծնողը պատասխանում է, որ գանգատ չունեն և նյարդաբանը գրում է, որ երեխան միանգամայն առողջ է: Բայց, եթե նյարդաբանը երկու հարց ավել տար, կնկատեր, որ երեխան զարգացման շատ լուրջ խնդիրներ ունի: Ես ուզում եմ ծնողներին և պոլիկլինիկայի աշխատակիցներին հորդորել մատների արանքով չնայել այս խնդրին, մասնագետները հասկանում են, թե ինչ լուրջ խնդիրների առաջ է կանգնելու երեխան, եթե **2-3** տարեկան հասակում այդ խնդիրների առաջը չառնենք և թույլ տանք, որ զարգանա այդ հիվանդությունը: Ծնորհակալություն:

Հայկ Մարության

-Ծնորհակալություն, ուզում եմ հետևություն անել Ձեր խոսքերից: Պետք է ուղղակի ծնողները հասկանան, որ առաջին հերթին իրենց է պետք, որ բժիշկները երեխային օբյեկտիվ գնեն և ասեն կան խնդիրներ, թե՛ ոչ, որպեսզի հնարավորինս շուտ միջամտեն: Ծնորհակալություն:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔՍՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյան, խնդրեմ:

Արման Անտոնյան

-Ծնորհակալություն, ինձ են դիմել բազմաթիվ քաղաքացիներ տարբեր առաջարկներով Կասկադ համալիրի տեսլականի հետ կապված: Ես ներքին կարգով գիտեմ, թե ինչ է կատարվում կամ ինչ կարգավիճակում է գտնվում Կասկադ համալիրն իր հարակից ոչ բարեկարգ տարածքներով: Խնդրում եմ այդ սրտացավ քաղաքացիների համար ևս բարձրաձայնել, թե ի՞նչ կարգավիճակում է գտնվում Կասկադ համալիր, ի՞նչ ծրագրեր կան համալիրի հարակից անբարեկարգ տարածքների մասով և ի՞նչ է առհասարակ այդտեղ լինելու: Քանի որ տարբեր սրտացավ քաղաքացիներ և համապատասխան մասնագետներ իրենց բանավոր առաջարկներով են հանդես գալիս: Խնդրում եմ Ձեր պատասխանը ներկայացնել Կասկադ համալիրի ճակատագրի և առհասարակ մինչև Հաղթանակ զբոսայգի ձգվող տեսարանի վերաբերյալ:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, շատ ճիշտ եք պարոն Անտոնյան, մտահոգիչ է այսօր Գասկադ համալիրի վիճակը: Այն մի կողմից հանդիսանում է մեր գլխավոր տուրիստական վայրերից մեկը, բայց մյուս կողմից չի հանդիսանում, որովհետև այն սկսվում է, բայց չի ավարտվում, արդեն երկար տարիներ է: Ասեմ ավելին՝ այնտեղ խնդիրը ոչ միայն տեսարանի հաճելի լինելու կամ չլինելու հարցն է, այլև անվտանգության խնդիր կա: Այնտեղ փտման գործընթաց կա, նաև կառույցի երկաթյա կոնստրուկցիաների հետ կապված խնդիր կա:

Սա արդեն հրատապ խնդիր է դառնում՝ ոչ միայն համալիրն ավարտելու հարցը, այլև անվտանգության խնդիրն է անհրաժեշտ լուծել: Սա առաջին հերթին, երկրորդը, եթե նույնիսկ որևէ մեկը ցանկանա գումար ներդնել այնտեղ ինչ-որ ծրագիր իրականացնելու համար, դա այնքան էլ հեշտ չէ, որովհետև տարածքն այս պահին համայնքին չի պատկանում: Այն Գաֆեաճեան հիմնադրամի տնօրինության տակ է գտնվում: Պետք է հասկանալ դրա հետագա ճակատագիրը, հիմնադրամը նույնպես մինչև վերջ կողմնորոշում չունի դեռ շարունակելու՞ է իր աշխատանքը, թե՛ ոչ: Նրանք որոշակի իրավական գործընթացներ ունեն ԱՄՆ-ում: Այդ գործընթացներից հետո միայն կկարողանան իրենք իրենց և քաղաքային իշխանությունների հստակ ներկայացնել իրենց մոտեցումը: Այս պահին սպասում ենք իրենց պատասխանին:

Ինչ վերաբերում է համալիրից դուրս տարածքներին, դրանք սեփական հողատարածքներ են, որտեղ այս պահին ակտիվացել է շինարարությունը: Ճիշտ է՝ արդեն ընդհանուր համալիրի գաղափարը խախտված է, որովհետև համաչափություն չկա: Այս պահին փորձում ենք գոնե ապագա շինությունների մասով համաչափություն պահել, որ համադրությունը ճիշտ լինի: Սակայն այս պահին ինչքան էլ փորձենք այն շտկել, միևնույն է լիարժեք չի ստացվի, ինչ ենթադրենք **10-15** տարի առաջ ասեինք այստեղ սա կարելի է, սա՛ ոչ, որի արդյունքում համադրությունն ամբողջական կլիներ և համաչափ: Այս պահին սպասում են Գաֆեաճեան հիմնադրամի վերջնական պատասխանին, ասեմ ավելին, որ տարեկան բավականին մեծ գումար են ծախսում այս ամենի վրա, այնպես չեմ որ հրաժարվելով մենք շահում ենք: Այստեղ անհրաժեշտ է նաև այդ կողմով մտածել:

Արման Անտոնյան

-Շնորհակալություն հանգամանալից պատասխանի համար, հուսով եմ այս պատասխանը գոհացրեց նաև բոլոր սրտացավ քաղաքացիներին:

Երկրորդ հարցս վերաբերում է առհասարակ կանաչապատմանը: Երևան քաղաքի, մասնավորապես, **2020**թ. բյուջեում ի՞նչ մեծածավալ կանաչապատման ծրագրեր են ներառված: Որպես հետգրություն ասեմ, որ մինչ օրս կամ մինչ **2019**թ. դեռ շարունակվում էր ծաղիկների տնկումը: Այդ ծաղիկների մի քանի ամսյա և բազմաթիվ ռեսուրսների ծախսումը,

որը նախկին քաղաքականությունից է գալիս և անարդյունավետ է: Այդ մի ամսվա ծաղկած ծաղիկը, իմ կարծիքով, համարժեք չէ այդ ամբողջ ռեսուրսների ծախսի հետ: Փոխարենը՝ կարելի է խնամված կանաչ գազոն ունենալ, թփեր կամ մշտադալար ծառեր:

2020թ. ի՞նչ մեծածավալ կանաչապատման նախագծեր ենք պլանավորում բյուջեում և առհասարակ ինչպիսին է մեր տեսլականը **2020թ.** «Կանաչ Երևան» ծրագրի հետ կապված:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, մենք արդեն տևական ժամանակ է սկսել ենք աշխատանքները: Նախևառաջ կառուցվածքային փոփոխություններ ենք պատրաստում և ակնկալում ենք, որ **2020թ.** մուտք կգործենք այդ կառուցվածքային փոփոխությունների ներքո: Այս պահին այն կառուցվածքային համակարգը, որն սպասարկում է Երևան քաղաքը, ըստ իս, արդյունավետ չէ և դրա համար մենք նախաձեռնել ենք կառուցվածքի բավականին հիմնովին փոփոխություն: Առաջինը կլինի կառուցվածքային փոփոխություն, երկրորդը՝ բյուջետային փոփոխություն, որովհետև, եթե կառուցվածքային փոփոխություն ենք անում և այն մարմինը, որն զբաղվելու է Երևանի կանաչապատմամբ, պետք է ունենա համապատասխան տեխնիկա և միջոցներ: Այսօրվա կանաչապատման ձեռնարկությունների տեխնիկան պիտանի չէ և խանգարում է ձեռնարկությունների գործունեությունը: Հետևաբար՝ բյուջեն պետք է մեծանա, համակարգը պետք է զինվի նոր, նորմալ մեքենաներով, որոնց միջոցով կարողանանք իրականացնել մեր առջև դրված նպատակները:

Հարցին կանդադառնա քաղաքապետի առաջին տեղակալ Հրայր Մարգարյանը, խնդրեմ:

Հրայր Մարգարյան

-Շնորհակալություն, երբ ունենանք վերջնական արդյունքները, բոլոր խմբակցություններին կհրավիրենք, բոլոր մոտեցումները մանրամասն կներկայացնենք, ինչպես ենք պատկերացնում **2020թ.** կանաչապատմումը: Անհոգ եղեք պարոն Անտոնյան, անպայման Ձեր հետ քննարկելու ենք և ներկայացնելու ենք այն տեսլականը, որն ունենք կանաչապատման հետ կապված:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արթուր Իսպիրյան, խնդրեմ:

Արթուր Իսպիրյան

-Ունեմ երկու հարց: Այս տարի մեծ շուքով նշեցինք Կոմիտաս վարդապետի **150-**ամյակը: Մակայն այսօր Կոմիտասի անվան կամերային երաժշտության տան շրջակա միջավայրը գտնվում է անբարեկարգ վիճակում: Այնտեղ ավտոկայանատեղ է դարձել, տասնամյակներ շարունակ սրճարաններ կան, որոնք **3** տարի է չեն էլ գործում, մնացել են

կիսակառույց: Ուզում եմ հարցնել, ե՞րբ է այդ կայանատեղի հարցը լուծվելու: Նշեմ նաև, որ այնտեղ «ՄԱՍ» սուպերմարկետի տարածքն այնքան է մեծացել, որ մի փոքր փողոց է բաժանում կամերային երաժշտության տնից: Ե՞րբ է այդ վիճակը բարելավվելու, կարծում եմ ավտոկայանատեղը և չգործող հին սրճարաններն ընդհանրապես պետք է հեռացվեն այդտեղից, որովհետև շատ տգեղ է:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Վիկտոր Մնացականյանը:

Վիկտոր Մնացականյան

-Շնորհակալություն հարցի համար: Իրականում անհանգստությունն ավելի շատ վերաբերում է ավտոկայանատեղին, բայց ասեմ, որ արդեն երկու շաբաթ է քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության հետ լայնամասշտաբ աշխատանքներ են արվել, մոտ **1000**քմ-ից ավելի բարեկարգվել է, նաև Այվազովսկու արձանի դիմացի բետոնե սալիկներն են փոխվել, տրանսպորտի վարչության և պարոն Հարությունյանի ջանքերով կանգառն ենք տեղափոխել ավելի հարմար տեղ, տեղադրված է լեդերով նոր լուսավորության համակարգ:

Խնդիրն այն է, որ Օղակաձև այգու **3**-րդ հատվածի մեծ մասը տնօրինում է երեք տնտեսավարող: Մեկը՝ որտեղ վարձակալում է «ՄԱՍ» սուպերմարկետը և կողքի հարակից տարածքները, կողքի սրճարանը և մեծ կտոր, մոտավորապես, **1** հա ևս մեկ տնտեսավարող, որը տիրապետում է գեղեցիկ ջրային ավազանը: Քաղաքապետարանի ուժերով արած բարեկարգումից հետո բոլորի հետ հանդիպել ենք, զրուցել ենք, շատ ոգևորվել են: Գիտենք այնտեղ կա գրքի շուկա, որի գծագրումը մեր ուրբանիստի և դիզայներների հետ ավարտվել է: Շատ հետաքրքիր տուրիստական վայր ենք ստեղծել, հարմարություններ ենք ստեղծել, անգամ նստարաններ ենք տեղադրել: Այս բարեկարգման ծրագրում գումար էր ավելացել, ևս **14** նոր նստարան ենք ավելացրել, ինչպես նաև աղբամաններ և հիմնական մասը բարեկարգված է, այսինքն՝ մուտքի հատվածը: Ցավոք, աջ մասի՝ Պատանի հանդիսատեսի թատրոնի դիմացի հատվածի վերաբերյալ, տնտեսավարողը ծրագիր է ներկայացրել, առաջարկում է քաղաքային իշխանություններին օգնել: Եթե չեմ սխալվում այդտեղ մոտ **5000**քմ ջրային ավազան կա, առաջարկում է քանդել, բայց տակը մուտք ունի, որտեղ ենթադրվում է ստորգետնյա ավտոկայանատեղ, քանի որ այդտեղ ծառերով պատված չէ: Բայց այդ հատվածը համարվում է լավագույն կոթող, չենք կարող և պարոն Մեսչյանի հետ պետք է քննարկել, որպեսզի ներկայացնենք քաղաքապետին, արդյոք քաղաքային իշխանությանը հարկավոր է ստորգետնյա կայանատեղին այդ գնով և հետո տնտեսավարողն ուզում է

վերականգնել ջրային հատվածը և շատրվանները: Մնացած երկու տնտեսավարողի հետ պայմանավորվածություն կա, նույն բետոնե սալիկներով բարեկարգել ամբողջ այգին:

Ինչ վերաբերում է Կոմիտասի 150-ամյակին՝ նշեմ, որ Կոմիտասի անվան կոնսերվատորիայի հարակից այգին ևս բարեկարգվելու է, այդ այգու տնտեսավարողը ևս ներկայացրել է զարգացման ծրագիր, որով ցանկանում են այգու և՛ լուսավորությունը, և՛ ռոռզման համակարգը թարմացնել, նորոգել և հատուկ լուսավորել Կոմիտասի արձանը:

Արթուր Իսախրյան

-Շնորհակալ եմ: Երկրորդ հարցս վերաբերում է կոմպոզիտորների միության շենքին: Նկատած կլինեք, երբ Թումանյան փողոցից նայում ենք, երևում է գեղեցիկ լուսավորված Թումանյանի տուն-թանգարանը, Մաշտոցի պողոտայից երևում է Մատենադարանը: Պուշկինի փողոցից պետք է երևար կոմպոզիտորների միության գեղեցիկ շենքը, որը երկար տարիներ ընդհանրապես չի լուսավորվում և անբարեկարգ վիճակում է: Կցանկանայի այդ գեղեցիկ կոթողը, որից շատ քիչ ունենք Երևանում, լուսավորվեր և նույնիսկ հարակից տարածքի բնակիչներին հորդորվեր իրենց պատշգամբները լինեն նույն գույնի, ոչ թե տարբեր գույների և շատ գեղեցիկ կլիներ, որ այդ շենքը երևար Պուշկինի փողոցի վերջնամասից:

Հայկ Մարության

-Մի շենքով չենք կարող սահմանափակվել, այս տարի իմ կողմից հանձնարարական է եղել, որպեսզի բոլոր այդ շենքերը գույքագրվեն: Միայն լուսավորությամբ չենք սահմանափակվելու, պետք է լինեն վերականգնողական, լվացման աշխատանքներ, այնուհետև՝ կանդրադառնանք լուսավորությանը: Գույքագրումն ընթացքի մեջ է, վերջնական պետք է ներկայացվի շենքերի ցանկը, վստահ եմ, որ Ձեր նշած շենքը նույնպես այդ ցանկում կլինի: Բացի այդ՝ կան կոնկրետ տարածքներ, ոչ միայն կետային շենքեր, այլև փողոցներ, հրապարակներ, որտեղ տարվելու են այդ աշխատանքները:

Բնականաբար՝ 2020թ. բոլորը չի լինի, որոշակի կարվի, արդեն հանձնարարական է տրվել: Նախնական ասեմ, որ պատրաստվում ենք Մաշտոցի պողոտայի ամբողջ երկայնքով փողոցի սալիկապատման, շենքերի վերականգնման և լուսավորության աշխատանքներ իրականացնել, բնականաբար՝ նաև մալուխները լուսատուներից կիջեցնենք ներքև, մի խոսքով՝ դարձնել օրինակելի, լավ, նաև տուրիստական առումով հետաքրքիր պողոտա: Մաշտոցի պողոտայից բացի՝ կբարեկարգվի նաև Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի ամբողջ տարածքը և լինի ընդհանուր նոր նախագիծ, որն իր մեջ ներառի նաև Տերյան, Թումանյան փողոցների և Մայաթ-Նովայի պողոտայի հատվածները, որոնք շրջափակում են Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքը:

Մրանք առնվազն այն երկուսն են, որոնք պետք է արվեն, պետք է մոտավորապես հաշվարկ անել, հասկանանք, մեր գումարները որքանով են բավականացնելու կետային շենքերի համար, որ նշեցի, բացի դրանից, եթե էլի գումար լինի, կարողանանք հասցնել նախագծերը, ապա ևս ինչ-որ օջախներ կարող ենք վերցնել և իրականացնել: Այն ինչ չենք հասցնի իրականացնել **2020թ.**, կանենք **2021թ.**-ին, ինչը՝ **2021թ.**-ի, կանենք **2022թ.**-ին, այսինքն՝ ամեն տարի կունկրետ օջախներ են լինելու՝ վերջնական համալիր լուծումով: Խոսքը սրա մասին է, այսինքն՝ կետային չի լինելու մի շենք, այլ շենքերը մի քանիսն են լինելու և չակերտավոր կետային համալիր լուծում՝ փողոց, հրապարակ և այլն:

Արթուր Իսպիրյան

-Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Հարցին կանդրադառնա Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Վիկտոր Մնացականյանը:

Վիկտոր Մնացականյան

-Պարոն Իսպիրյան, արդեն հանդիպել ենք կոմպոզիտորների միության շենքի հարակից տարածքի շենքի բնակիչների հետ, չորս պատշգամբից երեքը կանաչ են ներկված, որը տգեղ է և հեռվից գույների հակադրությունը շատ ուժեղ է, ուստի՝ պայմանավորվել ենք մեր ուժերով դա վերանորոգել, պարոն Սարգսյանի հետ քննարկել ենք շենքի լուսավորության հարցը, եթե չեմ սխալվում մոտ ժամանակներս դնելու ենք ճակատային լուսավորության հարցը: Ճիշտ էք, որ Պուշկինի փողոցից ավելի հստակ բացվի անգամ աստիճանները:

Պարոն Մեսչյանի հետ նաև քննարկել ենք, փորձում ենք Մարյան փողոցի աստիճանների ներքևի հատվածի նեղ մայթը լայնացնել, գեղեցիկ ծաղկանոց դարձնել, որ լավ մուտք լինի դեպի աստիճաններ, որը քաղաքը Կասկադի նման միացնում է վերևի Դեմիճյան փողոցը և թաղամասերը, Կոզեռնը փոքր Կենտրոնի, Սարյանի և մնացածի հետ:

Արթուր Իսպիրյան

-Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Հայկ Միրզոյան, խնդրեմ:

Հայկ Միրզոյան

-Շնորհակալություն պարոն քաղաքապետ: Մեր՝ նոր ավագանու գալով, պարզվեց, որ համարյա բոլոր համակարգերը խարխլված վիճակում են, բոլոր խնդիրներն անմիջապես եկան կանգնեցին մեր առջև: Ամենաաղետալին, իհարկե, աղբահանությունն էր, որը շատ բարձր մակարդակով լուծվեց: Այնպես չէ, որ միայն աղբահանության հարցն է լուծվում, նաև

մնացած ոլորտների վրա է մեծ ուշադրություն դարձվում, մասնավորապես տրանսպորտը, ռոռզման ցանցը, կանաչապատումը և այլն: Սկզբնական շրջանում բարձրացված հրատապ խնդիրներից էր նաև շտապօգնության ծառայության հետ կապված հարցերը: Այս ուղղությամբ նույնպես բավականին մեծ աշխատանք է տարվել: Ցանկանում եմ տեղեկանալ կատարված աշխատանքների ծավալների, այդ ծառայության հետ կապված հետագա ծրագրերի, նյութատեխնիկական վերազինման և այլնի մասին:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

Սերգեյ Հարությունյան

-Շնորհակալություն, պարոն Միրզոյան ճիշտ էք, բազմաթիվ գործեր կան անելու: Այսօր կարելի է նշել, որ տարեսկզբից մեր քննարկումները շտապօգնության աշխատակիցների հետ ստացել են լուծում, որովհետև բոլոր այն խոստումները, որոնք տվել ենք, կատարված են: Դրանցից մեկն ընթացքում է: Տարեսկզբում ունեցանք հանդիպում շտապօգնության աշխատակիցների հետ, այնտեղ բազմաթիվ խնդիրներ կային կապված ն՛ մեքենաքանակի, ն՛ շենքային պայմանների, ն՛ այլ հարցերի հետ:

Պարոն Միրզոյան, կարող եմ ասել Ձեզ, այն հարցերը, որոնք տարեսկզբին քննարկել ենք, բոլորը լուծվել են: Այսօր ունենք ավել 15 բրիգադ, որը բավականին թեթևացնում է ծանրաբեռնվածությունը:

Պարոն Մարության, ի վերջո, 2 փուլով ստացվեց ենթակայանների վերանորոգումը, աշխատանքներն ընթացքի մեջ են: Նախագծային նախահաշիվը գրեթե ավարտված է, շինբարեկարգման վարչության պետ պարոն Հարությունյանի հետ ուղիղ կապի մեջ ենք: Մոտ ժամանակներս կսկսվեն վերանորոգման գուտ շինարակական աշխատանքները:

Կարող եմ արձանագրել, որ այս տարի վերազինեցինք շտապօգնության մեքենաները տեսաձայնագրող սարքերով, որոնք հնարավորություն կտան վարորդներին, ավելի անվտանգ երթնեկել և արձանագրել ցանկացած խախտում: Քանի որ ճանապարհ չզիջելը շտապօգնության մեքենային, երբ լուսաձայնային համակարգը միացված է, դա արդեն իսկ խախտում է: Ներկայումս ճանապարհային ոստիկանության հետ քննարկում ենք, օրենքի մեջ փոփոխություն են ուզում մտցնել, որպեսզի եվրոպական մի շարք երկրների նման այդ արձանագրությունը հիմք հանդիսանա, որ ճանապարհային ոստիկանությունը կարողանա տուգանել այն մեքենային, որը չի զիջել շտապօգնության մեքենային:

Այս տարի մրցութային կարգով շտապօգնության աշխատակիցների համար գնվել են համազգեստներ: Առողջապահության նախարարության հետ երկար բանակցությունների

արդյունքում և նրանց ջանքերով, կառավարության որոշմամբ շտապբուժօգնության աշխատակիցներն ստացան ապահովագրության սոցիալաթիվներ:

Հաջորդ տարվա ծրագրերով նախատեսում ենք մեր ջանքերն ու հնարավորություններն ուղղել զանգերի կենտրոնների աշխատանքների բարելավմանը: Բյուջեով նախատեսենք գումար, որպեսզի այդ կենտրոնները վերազինենք, դարձնենք ավելի ժամանակակից և արդիական, ինչն աշխատակիցներին կտա հնարավորություն ավելի հարմարավետ և անհրաժեշտ սարքավորումներով համալրված պայմաններում քաղաքացիներին մատուցել առավելագույնս բարձր որակի ծառայություն: Այդ ուղղությամբ տարվում են աշխատանքներ, տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի աշխատակիցներին խնդրել եմ գույքագրել բոլոր խնդիրները: Այդ ամենը ներառված կլինի հաջորդ տարվա ծրագրում, եթե բյուջեն հաստատվի, հաջորդ տարի կունենանք նոր, վերազինված շտապբուժօգնության զանգերի կենտրոն, ավելի շատ աշխատակիցներով և լավ պայմաններով:

Հայկ Միրզոյան

-Շնորհակալություն, պետք է նշել, որ մինչ այժմ, մինչև մեր գալը, մարդիկ նույնիսկ համազգեստ չունենին: Չեմ խոսում էլ մնացած վատ պայմանների մասին:

Իսկապես, ողջունելի է կատարված աշխատանքները, մենք ամեն ինչ անելու ենք, որ գնալով ուժեղացնենք, հատկապես ուշադրություն դարձնենք նյութատեխնիկական հագեցվածության վրա:

Երկրորդ հարցս նույնպես առողջապահության ոլորտին է վերաբերում: Ըստ էության՝ խնդիրը հետևյալն է, եթե ուզում ենք բժշկական օգնության որակը բարելավել, առաջինը պետք է հսկողությունը մեծացնել, ինչը վարչության աշխատակիցներով ֆիզիկապես դժվար է հասցնել: Այս պարագայում հարկավոր է հսկողության մեխանիզմները կատարելագործել: Նախ հարցս ուղղեմ, հետո այդ հարցի հետ կապված առաջարկ կանեմ:

Ի՞նչ մեխանիզմներ ունենք հետագայում պոլիկլինիկաներում հսկողությունն ուժեղացնելու ուղղությամբ:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

Սերգեյ Հարությունյան

-Պարոն Միրզոյան, ո՞ր հսկողության մասին է խոսքը:

Հայկ Միրզոյան

-Օրինակ՝ հարց առաջացավ 26 ձևի հետ կապված և առհասարակ բժշկական օգնության բարելավման համար ոչ միայն քաղաքացիներն ու հիվանդները պետք է ուշադիր լինեն, այլև մենք պետք է հետևողական լինենք:

Մերգեյ Հարությունյան

-Պարոն Միրզոյան, բնականաբար, պետք է հսկողությունը լինի շատ բարձր որակի, բուժճառայության որակը պետք է բարձրանա, ամեն ինչ կանենք, որպեսզի մեր քաղաքացիներին մատուցենք մաքսիմալ որակյալ ծառայություն: Բնականաբար՝ հաջորդ տարի, ըստ նախատեսված ծրագրի, եթե հաստատվի, ձեռք կբերենք նոր սարքավորումներ, որը հնարավորություն կտա հետազոտությունների առումով լավ որակի ծառայություն մատուցել: Իմ կարծիքով՝ այս պահին ամենակարևորն այն է, որ ունենք ներդրված էլեկտրոնային համակարգ և կառավարման ծրագրի առաջին քայլն արված է: Այդ ծրագրի ամենակարևոր կետերից մեկն այն է, որ ոչ միայն մեր քաղաքացիների համար ստեղծում է հնարավորություն առանց պոլիկլինիկա այցելելու հեռախոսազանգով հերթագրվել, նաև ասեմ, որ պատրաստ է ինտերնետային տարբերակը, որը թեստավորման փուլում է և մոտ ժամանակներս կլինի օնլայն հերթագրման համակարգ: Այսինքն՝ հնարավորություն կլինի առանց հեռախոսազանգի հերթագրվել:

Այդ համակարգի ներդրման երկրորդ դրական կողմն այն է, որ կունենանք հստակ վիճակագրություն, թե որ բժշկի մոտ քանի հոգի է այցելել, որ տարածքային թերապևտի մոտ է հերթ, իսկ մյուսի մոտ չեն այցելում: Դա կհանդիսանա այն ցուցանիշը, թե ո՞ր բժիշկն է ավելի լավ աշխատում, ո՞ր բժշկի մոտ չեն գնում և մեզ համար մեկ հանգամանք կլինի ևս այդ բժշկի աշխատանքն ուսումնասիրել՝ պարզելու համար ի՞նչն է պատճառը, որ քաղաքացիները խուսափում են այցելել նրան:

Դա հասանելի կդառնա համակարգի վերջնական ներդրումից հետո, շաբաթական կունենանք տվյալների հավաքագրում, որով կարվի այդ վերլուծությունը: Ասեմ, որ նեղ մասնագետների մոտ հերթագրման առաջին փուլը մինչև տարեվերջ կավարտենք և երկրորդ փուլը կսկսվի հաջորդ տարվա սկզբին: Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, պարոն Միրզոյան այս խնդրի լուծման բանալին ոչ թե, ենթադրենք, քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության անձնակազմի ավելացումն է, այլ տեղերում բոլոր գործընթացների թվայնացումը: Դրա շնորհիվ կունենանք, ինչպես նշեց պարոն Հարությունյանը, տեղեկատվություն բժիշկների

գործունեության վերաբերյալ, թե որ բժիշկն է իր գործունեությամբ համապատասխանում այն պահանջներին, որոնց սպասում ենք:

Հայկ Միրզոյան

-Շնորհակալություն, բարձր գնահատելով ջանքերը, ուզում եմ նաև տեղեկացնել, որ ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության շրջանակում ձևավորված է առողջապահության աշխատանքային խումբ, որը նույնպես քննարկումներ է անում այս ուղղությամբ և պատրաստում է նախագիծ մենեջմենթն էլ ավելի բարձր մակարդակի բարձրացնելու համար: Հուսով եմ արդյունքները միասին կքննարկենք և վերջնական որոշում կկայացնենք: Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սաթենիկ Մկրտչյան, խնդրեմ:

Սաթենիկ Մկրտչյան

-Առաջին հարցս վերաբերում է մանկապարտեզների բակային տարածքներին: Շատ քիչ մանկապարտեզներ ունենք, որոնք բակերում ունեն ռոռզման համակարգ և արդյունքում մանկապարտեզների տնօրեններից ահռելի ջանքեր են պահանջվում այդ տարածքները կարգի բերված պահելու համար: Քիչ մանկապարտեզներում կան այգեպանների հաստիքներ, հաստիքակազմի ամբողջ փաթեթն ինձ մոտ է: Տարբեր են լուծումները, որոշ տնօրենների, այնուամենայնիվ, հաջողվում է ունենալ որոշակի բարեկարգ տարածքներ, որոշ մանկապարտեզների բակային տարածքներ շատ վատ վիճակում են: Վատ է, որ երեխաներն այդպիսի միջավայրում են հաճախում մանկապարտեզ:

Սա այն ժառանգությունն է, որ ունենք և պետք է փորձենք լուծել այդ հարցը: Հարցս է՝ կա արդյոք որևէ առանձնակի լուծում, որը կվերաբերի մանկապարտեզների բակերին, որովհետև այս պահին դրանք մանկապարտեզների տնօրենների հոգածության տակ են: Ես, օրինակ, կարող եմ առաջարկել դա հանձնել կանաչապատման նոր միավորին կամ որևէ այլ լուծում: Կարծում եմ, որ երեխաների համար հատկացված տարածքները պետք է երեխաների լանդշաֆտ դիզայնի տեսանկյունից դիտվեն և կարողանանք ընդհանուր լուծում գտնել բոլոր մանկապարտեզների համար:

Հայկ Մարության

-Իմ մոտեցումն այն է, որպես առանձին միավոր վերցնենք, պետք է բոլոր մանկապարտեզներն առանձին-առանձին, ամեն մեկն իր մոտեցումով կոնկրետ այդ հարցը լուծել: Ենթադրենք վարչական շրջանում կատարվում են գործողություններ, այս հարցը ոչ թե լուծեն ընդհանուրի հետ, այլ սա առանձին կտոր է, որը պետք է առանձին լուծում ստանա: Նույնը վերաբերում է դպրոցներին, որպես առանձին կտոր պետք է լուծում ստանան, անկախ

ամբողջ վարչական շրջանում կատարվող գործողությունների: Սրանք, նախ՝ ավելի առաջ կգցեն այս ամենը, քանի որ պարզ է չէ՞, որ ամբողջ վարչական շրջանի, ենթադրենք ոռոգման համակարգը գրոյից անցկացնելը կտևի անհայտ ժամանակ, բայց եթե առանձին վերցնենք մանկապարտեզները, դպրոցները որպես առաջնահերթային, որը, ըստ իս, այդպես պետք է անել, ավելի արագ արդյունք կստանանք:

Քաղաքապետի առաջին տեսակալ Հրայր Սարգսյանը կանդրադառնա հարցին:

Հրայր Սարգսյան

-Պարոն քաղաքապետ, այն մանկապարտեզներում, որտեղ նախագծեր ենք դրել, ներառված են ն՝ վերանորոգումը, ն՝ դրսային աշխատանքները, այդտեղ ներառված է նաև ոռոգման ցանցը: Այսինքն՝ այդ խնդիրը դրանով լուծվում է:

Հայկ Մարության

-Իսկ որը որ չի դրվե՞լ:

Հրայր Սարգսյան

-Որը որ չի դրվել, այս պահի դրությամբ բացակայում է:

Հայկ Մարության

-Այդ պատճառով ասում եմ՝ պետք է այս հարցը որպես առանձին առաջադրանք լուծենք, ոչ թե կապենք վերանորոգման կամ այլնի հետ:

Վերջերս մի դեպք տեղի ունեցավ. փողոցում պատահական հանդիպեցի մի մարդու, ծանոթացանք, պարզվեց, որ մեր երեխաները նույն մանկապարտեզն են հաճախում և ասաց. «Պարոն քաղաքապետ եկեք ծնողներով գումար հավաքենք և մեր մանկապարտեզի տարածքը բարեկարգենք»: Ասացի՝ որպես ծնող դեմ չեմ, բայց որպես քաղաքապետ կդիտարկեմ դրամահավաքություն և, ըստ իս, խնդիր կառաջանա, ասացի չգիտեմ դրա լուծումն ինչպես տալ: Ես որպես ծնող պատրաստ էի և բոլոր ծնողներն էին պատրաստ, բայց հիմա խճճված իրավիճակ է և պարոն Վիրաբյանը պետք է ասի ինչ ենք անելու, որպես ծնողներ ինչպես ենք սա կազմակերպելու: Համենայնդեպս՝ կարելի է նաև մեթոդ մշակել ծնողների մասնակցության վերաբերյալ:

Հարցին կանդրադառնա քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

Տիգրան Վիրաբյան

-Շնորհակալ եմ հարցի համար: Նախ՝ ինչ վերաբերում է հաստիքակազմերում այգեպանների ներգրավվածությանը, առանձին ՀՈԱԿ-ներ են, իրենք են քննարկում իրենց հաստիքակազմը, իրենք են գնահատում իրենց կարիքները և այն մանկապարտեզները, որոնք

կարիքների մեջ գնահատում են, որ իրենց հաստիքակազմում այգեպան ունենալու անհրաժեշտություն ունեն, ներկայացնում են, քննարկվում է դրա անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է ծնողներից գումար հավաքելուն և որևէ տեղ ուղղելուն, կտրականապես դեմ ենք, պարոն քաղաքապետ, նաև այդ հարցն ենք քննարկել, որովհետև չենք կարողանում գտնել ճիշտ մեխանիզմները, երբ որ բակի համար հավաքված գումարը վերջում չի ծառայում որպես մանկապարտեզի կամ դպրոցի տնօրենի առանձնասենյակի բարելավման համար: Այդ մասով անելիք ունենք, որովհետև ոչ բոլոր ծնողներն են հնարավորություն ունենում մասնակցելու:

Դպրոցում ունեցել ենք այդ դեպքը, մի քանի ծնողով, առանց տնօրենի իմացության, գումար էին հավաքել ընդամենը շերտավարագույրը փոխելու համար և Լևոն Զաքարյանի բարձր հովանու ներքո այդ հարցը ամենայն խստությամբ բարձրացվեց, և այդ գործընթացի մասնակիցները պատժվեցին: Ես կարծում եմ, որ այս պարագայում պետք է զերծ մնանք այդ գործընթացներից:

Հայկ Մարության

-Շնորհակալություն:

Մաթենիկ Մկրտչյան

-Այնուամենայնիվ՝ որպես արձագանք մի բան ասեմ. գիտենք, որ մանկապարտեզներն ինչ ֆինանսական միջոցներ ունեն և շատ մանկապարտեզներ իրենց բյուջեի շրջանակներում չեն կարողանում այդ բակային տարածքի հարցը լուծել: Հաստիքակազմն էլ նույն տրամաբանությամբ՝ փոքր խմբերով մանկապարտեզներում դա խնդիր կլինի: Այդ պատճառով եմ ասում, պարոն քաղաքապետ, Դուք էլ ճիշտ նկատեցիք, որ արժե, այնուամենայնիվ, առանձին հարցով այս խնդիրը քննարկել, որովհետև երեխաներն իրավունք ունեն մաքուր օդի և կանաչ տարածքի պայմաններում հաճախել մանկապարտեզ:

Նաև մի հարց էլ կա, իհարկե, ՀՈԱԿ-ի մենեջերական հմտություններից կախված՝ մի տեղ լավ է ստացվում, մի տեղ՝ վատ: Վերջերս բակի խոտերն անասելի աճած մանկապարտեզում ենք եղել, դեռ չեմ հասցրել վարչական շրջանի ղեկավարի հետ խոսել, եթե չեմ սխալվում **83**-ն էր: Այդ հարցն էլ իհարկե կա, բայց այստեղ կա նաև ռոզման համակարգի և այգեպանի ծառայությունների խնդիր: Շնորհակալություն:

Երկրորդ հարցս վերաբերում է վերջերս Թբիլիսի կատարած այցին: Կցանկանամ պատասխանեք ի՞նչ եղավ այցի արդյունքում, ի՞նչ կապեր, ի՞նչ ծրագրեր եղան: Նաև ուզում եմ ասել, որ Թբիլիսին շատ կարևոր քաղաք է Երևանի համար, որովհետև նաև շատ հայերի **19**-րդ և **20**-րդ դարերի պատմությունը կապված է Թիֆլիսի հետ, և մենք պետք է կարողանանք այդ ժառանգությունը հոգատարությամբ պահպանել և Երևանն այդ հարցում կարևոր դեր

ունի: Երկրորդն էլ՝ Վրաստանը ռեֆորմների ճանապարհով մի քիչ ավելի շուտ է անցել և շատ կարևոր է իրենց քաղաժ դասերի ու հաջողությունների մասին մենք էլ կարողանանք ինֆորմացված լինել, ինչպես նաև տեղեկանանք նրանց հաջողությունների մասին՝ մեր ռեֆորմներում օգտագործելու համար:

Հայկ Մարության

-Շատ շնորհակալ եմ: Ես էլ եմ կարևորում Թբիլիսիի հետ մեր հարաբերությունները, որովհետև, նախ, եթե դիտենք փորձի փոխանակման տեսանկյունից, ինչպես Դուք նշեցիք, շատ ճիշտ է, գործընթացներ կան, որոնք նրանք անցել են ավելի շուտ: Բացի դրանից՝ մեր քաղաքները շատ նման են թե՛ տարածքով, թե՛ բնակչության քանակով և խառնվածքով: Բացի Թբիլիսի կատարած այցից՝ նաև «Թափառող կենդանիների վնասագերծման կենտրոն» ՀՈԱԿ-ն ստեղծելու ժամանակ մեր պատվիրակության անդամներն իրենց հաշվին մեկնել են Թբիլիսի, հանդիպել են համանման ՀՈԱԿ-ի ղեկավարի և աշխատակիցների հետ և ամբողջ ինֆորմացիան վերցրել են, որն էլ օգտագործվեց մեր ՀՈԱԿ-ի ստեղծման ժամանակ: Իմիջիայլոց նշեմ, որ այն շատ օգտակար էր, այսինքն՝ շատ ավելի վաղ ենք սկսել: Այն ժամանակ նաև ինֆորմացիա է հավաքվել թե՛ աղբահանության, թե՛ տրանսպորտի և այլ ոլորտների մասին, սակայն մեծամասամբ այս ուղղությամբ էր աշխատանքներ տարվում: Սա առաջինը:

Այս մեկը քանի որ պաշտոնական էր և այցելության համար գումարներ են ծախսվել, պետք է հասկանանք քաղաքին ինչ օգուտ տվեց: Բացի բարիդրացիական հարաբերություններից, որոնք վերահաստատվեցին և ավելի ջերմացան և կշարունակեն ջերմանալ, մեր ձեռքբերումներից մեկը Թբիլիսիի քաղաքապետարանի հետ պայմանավորվել ենք հոկտեմբերի 25-ին այնտեղ անցկացնել մշակութային օրեր՝ նվիրված կոնկրետ Թումանյանին: Այստեղից մշակութային գործիչների մեծ պատվիրակությամբ մեկնելու ենք, լինելու են նաև Թբիլիսիի մշակութային գործիչներ: Թբիլիսիի քաղաքապետի հետ պայմանավորվեցինք ինքը և ես ներկա պետք է լինենք, սա առաջինը:

Երկրորդը՝ հանդիպեցինք Բիշկեկի քաղաքապետի հետ, որը նախատեսված չէր, սակայն փորձում ենք ժամանակը մաքսիմալ օգտավետ օգտագործել: Քանի որ Բիշկեկի հետ տարիներ առաջ սկսված գործընթաց ունեինք քույր քաղաքներ դառնալու համար, մեր կողմից նախաձեռնությունը կար, իրենց կողմից նախաձեռնությունն ընթացք չէր ստացել, ես ևս մեկ անգամ վերահաստատեցի մեր ցանկությունը և գործընթաց սկսեցի: Բիշկեկի քաղաքապետի կողմից խանդավառությամբ ընդունվեց այս մտահղացումը և ասաց, որ տեղ հասնելուն պես հանձնարարական կտա և իրենց ու մեր համապատասխան վարչությունները կսկսեն իրար

հետ աշխատել: Եթե չեմ սխալվում, արդեն սկսել են իրար հետ աշխատել, այսինքն՝ այստեղ էլ առաջընթաց կունենանք:

Հարցին կանդիդատնա քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

Տիգրան Վիրաբյան

-Շնորհակալություն, ընդհանրապես մշակութային մասով նախատեսում ենք Թբիլիսիի քաղաքապետարանի հետ հաջորդ տարի մշակութային փոխադարձ այցելություններ կազմակերպել, որը նշանակում է 7-օրյա մշակութային միջոցառումներ Թբիլիսիում և Երևանում: Թբիլիսին իր մշակութային ամբողջ գունապնակը կբերի Երևան, և մենք մեր մշակութային լավագույն ընտրանին կտանենք Թբիլիսի: Կարծում եմ՝ սա առաջին մեծածավալ մշակութային նախաձեռնությունը կլինի, նաև զբոսաշրջային առումով հիմա Թբիլիսիի մեր գործընկերների հետ հետաքրքիր նախագիծ ենք քննարկում, որպեսզի կարողանանք աշխարհին ներկայանալ մեկ ընդհանուր զբոսաշրջային փաթեթով, որն իր մեջ կներառի 7-օրյա այցելություն և՛ Հայաստան, և՛ Վրաստան: Այս մասով նույնպես անելիք ունենք, սա սիմվոլիկ բնույթ է կրում, նաև հետաքրքրություն առաջացնող, որ զբոսաշրջիկը մեկ փաթեթ ընտրելով կլինի և՛ Թբիլիսիում, և՛ Երևանում:

Ընդհանրապես շատ եմ կարևորում մշակութային այս կապը, որովհետև տարիներ շարունակ մշակութային բարեկամություն ենք ունեցել: Ինչ վերաբերում է բուն Թումանյանի միջոցառմանը, սա, լինելով նույնպես մշակութային միջոցառում, հետաքրքիր քաղաքական էլեմենտ ունի: Մեր և Թբիլիսիի մշակույթի գործիչները, գիտեք, տարիներ շարունակ Թումանյանի Վերնատանը հանդիպել են, քննարկել են մշակութային գաղափարներ: Սակայն այդ կապերը խզվել են և այսօր հայ և վրացի մտավորականների համախմբման անհրաժեշտություն կա, նույն սեղանի շուրջ նստելու և երկու պետությունների, երկու քաղաքների մշակութային քաղաքականությունը տեղում մշակելու, քննարկելու և տարիներ շարունակ իրար չտեսած ընկերներին ևս մեկ անգամ հանդիպելու հնարավորություն տալու համար:

Սա կանենք Թումանյանի հանճարեղ Վերնատանը և սա նույնպես կլինի հարգանքի տուրք Թումանյանի 150-ամյակին:

Հայկ Մարության

-Շատ շնորհակալություն: Շարունակելով թեման՝ այս երկու օրն օգտագործեցինք մշակութային վեհ թեմաների շուրջ: Իրենց մոտ էլ նույն խնդիրները կան՝ ապօրինի շինարարություն, աղբահանություն և այլն, վերջին օրը նվիրել եմ այդ թեմաներին: Այցելել եմ բակեր, որտեղ ապօրինի մեծ շինարարություն կար, բնակիչների հետ պայմանավորվել են և

կարողացել են ամբողջ ավտոտնակները մաքրել և ուղղակի բացօթյա ավտոկայանտեղեր են ստեղծել, որտեղ բավականին մեծ տարածք խնայվում է և դրանց հաշվին ստեղծել են խաղահրապարակներ: Շատ հետաքրքիր նախագիծ էր, ինձ շատ դուր եկավ և պետք է մեզ մոտ գտնենք այդպիսի բակեր, որտեղ հնարավոր է դա կիրառել: Այստեղ կարևորն այն է, որ մարդիկ համաձայնել են իրենց ավտոտնակը հանձնել համայնքին՝ փոխարենը մի ավտոկայանատեղ ստանալ:

Ինչ վերաբերում է աղբահանությանը, մենք այսօր առաջ ենք: Պարզ ասեմ՝ այնտեղ տեսա և քննարկումների ժամանակ հասկացանք, որ այս մասով առաջ ենք: Առաջ ենք ոչ միայն աղբահանությամբ, այլ ցիկլն ավարտելու համար, այսինքն՝ տեսակավորումով, որն արդեն որոշ վարչական շրջաններում սովորաթղթով սկսել ենք և ավելացնելու ենք, նաև իրականացնելու ենք դպրոցներում և քիչ-քիչ անցնելու ենք պլաստիկի: Ճիշտ է՝ հատվածներով ենք իրականացնում, բայց, ի վերջո, բոլոր վարչական շրջաններում իրականացնելու ենք և կստացվի ամբողջ քաղաքում կատարված: Մի խոսքով՝ մի հարցում մենք ենք մի քայլ առաջ, մյուս հարցում իրենք են մի քայլ առաջ, նման քաղաքներ են՝ նման խնդիրներով և համագործակցությունն ու փորձի փոխանակումը շատ կարևոր են: Այդ պայմանավորվածությունները ձեռք բերվեցին, քաղաքապետարանի բոլոր վարչությունները կարող են կոնկրետ զանգով անգամ իրար հարց ուղղել, պատասխան ստանալ, եթե պետք է այցելեն և այլն:

-Շնորհակալություն, ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի անդամներ, Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 2-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կազմեցին՝ Անի Եփրիկյան
Լուսինե Կարապետյան